Եվրոպայի խորհուրդ

Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022 թթ. ծրագիր

GR-DEM(2018)16
11 դեկտեմբերի, 2018թ.

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակի կողմից:

Փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2019 թ. հունվարի 9-ին (CM/Del/Dec(2019)1333):

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Եվրոպայի խորհրդի «Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022 թթ. ծրագիրը» ռազմավարական կառուցակարգ է, որն ուղղված է մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում Հայաստանի օրենսդրության, հաստատությունների ու աշխատակարգերի հետագա համապատասխանեցմանը եվրոպական չափանիշներին: Սույն գործողությունների ծրագրով նախատեսվում է օժանդակել Հայաստանի Հանրապետության՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված ջանքերին:

Սույն գործողությունների ծրագրում հաշվի են առնված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) համապատասխան վճիռները, ինչպես նաև մի շարք կառույցների որոշումները, բանաձևերը, հանձնարարականները, զեկույցների եզրակացություններն ու կարծիքները. այդ կառույցներն են՝ Նախարարների կոմիտե (ՆԿ), Խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ), Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես (Կոնգրես), Մարդու իրավունքների հանձնակատար (Հանձնակատար), Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե (ՍԻԵԿ), Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով (CEPEJ), Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով (ECRI), Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին եվրոպական կոնվենցիա (GRETA), Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե (ՇԿԽԿ), Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (ECRML), Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO), Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող կոմիտե (MONEYVAL): Փաստաթղթում հաշվի է առնված նաև Հայաստանի Հանրապետության բարեփոխումների ազգային օրակարգը, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների 2017-2019 թթ. ծրագիրը:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակում Եվրոպայի խորհուրդը և Հայաստանը համաձայնել են շարունակել համատեղ աշխատանքը համագործակցային ծրագրերի, բարեփոխումների միջոցով, որոնք նպատակաուղղված են արդարադատության համակարգի անկախության, թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը, մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ներդաշնակ կիրառմանը, զինված ուժերում մարդու իրավունքների և ազատազրկվածների առողջապահական իրավունքների պաշտպանության ընդլայնմանը, ազատազրկման վայրերում վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարին, ոստիկանության համակարգի բարեփոխումներին աջակցությանը և քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացմանը, նախնական կալանքի չարաշահման դեպքերի նվազեցմանը և պրոբացիայի ծառայություններից օգտվելու ցուցանիշի բարձրացմանը: Նաև կարևորվելու է բոլոր հիմքերով խտրականության դեմ պայքարը, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, անձնական տվյալների պաշտպանությունը և զանգվածային լրատվամիջոցների ազատության, լրագրողների անվտանգության ու համացանցի կառավարման բարելավումը: Նաև համաձայնություն է ձեռք բերվել ամրապնդելու բարեվարքությունը բարձրագույն կրթության համակարգում և ընտրական գործընթացներում, կանխարգելել կոռուպցիան, կիբեռհանցավորությունը և կանանց ու երեխաների նկատմամբ բռնությունը և պայքարել դրանց դեմ, խթանել գենդերային իրավահավասարությունը, երեխաների և ծնողների իրավունքները, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և աշխատանքային իրավունքները և ամրապնդել տեղական ինքնակառավարումն ու երիտասարդական քաղաքականությունը: Քաղաքական դաշտում առկա կուսակցություններն իրենց հանձնառությունն են արտահայտել շարունակելու ժողովրդավարության կայացման գործընթացն՝ ի բարօրություն հայ ժողովրդի: Ավելին, ընտրական ոլորտում առ այսօր ձեռնարկված բարեփոխումները և կոռուպցիայի դեմ պայքարում լայն հանրային աջակցությունը ոգևորող

նշաններ են, որոնք ընդգծում են բարեփոխումների շարունակությունն ապահովելու կարևորության գիտակցումը բոլորի կողմից:

Եվրոպայի խորհուրդը ապագայի ցանկացած կառավարության կաջակցի առաջնահերթ բարեփոխումներն առաջ տանելու գործում՝ հիմք ընդունելով մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և կառավարման եվրոպական չափանիշները: Սույն գործողությունների ծրագիրը հիմնվում է նախորդ՝ 2015-2018 թթ. գործողությունների ծրագրով գրանցած ձեռքբերումների վրա: Այդ ծրագրի հիմնական արդյունքներից են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ամրապնդումը փոփոխված Սահմանադրությամբ, դատական համակարգի և դատախազության անկախության և հաշվետվողականության կատարելագործված իրավական և ինստիտուցիոնալ դաշտը, սահմանադրական արդարադատության համակարգի հզորացումը և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բարելավումը: Այլ ուշագրավ արդյունքներ են մարդու իրավունքների պաշտպանի ամրապնդված դերը, այդ թվում որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, և վատ վերաբերմունքի դեմ պայքարի և հետաքննության, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի բարելավված կարողությունը: Պրոբացիայի ծառայության ստեղծման և բանտերում բուժծառայությունների մատուցման բարելավման շնորհիվ բանտային համակարգն ավելի է մոտեցել եվրոպական չափանիշներին: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունման շնորհիվ բարելավվել է ընտրությունների անցկացման իրավական և ինստիտուցիոնալ դաշտը, իսկ «Քաղաքական կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով ազատականացվել են քաղաքական կուսակցությունների ստեղծման և գրանցման կարգավորումները: Տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության բարելավումը աջակցել է ապակենտրոնացման քաղաքականության իրականացմանը և տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը, որին նպաստել է նաև Հայաստանի համայնքների միությունը՝ իր հզորացված կարողությունների շնորհիվ: Ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին օրենքի ընդունմամբ և Ստամբուլի կոնվենցիայի ստորագրմամբ հարթվել է այդ գործիքի հետագա վավերացման ճանապարհը:
Սույն գործողությունների ծրագրի ընդհանուր բյուջեն մոտավորապես 18.9 միլիոն եվրո է: 0.1 միլիոն եվրոյի չափով ֆինանսավորում ապահովված է: Հետագա ֆինանսավորում է անհրաժեշտ 2019-2022 թթ. սույն գործողության ծրագրում ներկայացված գերակա խնդիրների լուծման համար:
Եվրոպայի խորհուրդը և Հայաստանը կշարունակեն համագործակցությունն առկա օրենսդրական դաշտը բարելավելու, դրա արդյունավետ կիրառումն ապահովելու և Հայաստանի օրենսդրությունն ու պրակտիկան եվրոպական չափանիշներին մոտարկելու՝ ներպետական կառույցների կարողությունները զարգացնելու ուղղությամբ՝ ի նպաստ մարդու իրավունքների խթանման, իրավունքի գերակայության ամրապնդման և կառավարման ժողովրդավարական սկզբունքների ապահովման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 2
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 5
ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 7
1.1.1 Հայաստանը և Եվրոպայի խորհուրդը 7
1.1.2 Եվրոպայի խորհրդի տեխնիկական աջակցության ծրագրերի առավելությունը 8
1.1.3 Մոնիթորինգային մեխանիզմի և փորձագիտական խորհրդատվական մարմինների հիմնական եզրակացությունները 8
1.2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 13
ՄԱՍ II. 2019-2022 ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15
2.1 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 15
2.1.1 Մարդու իրավունքների պաշտպանություն 15
2.1.2 Մարդու իրավունքների և արժանապատվության խթանում 19
2.1.3 Սոցիալական իրավունքների ապահովում 24
2.2 ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 25
2.2.2 Իրավունքի գերակայության ամրապնդում 29
2.2.3 Պայքար իրավունքի գերակայությանը սպառնացող գործոնների դեմ 31
2.3 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 33
2.3.1 Ժողովրդավարական կառավարման ամրապնդում և նորարարության խրախուսում 34
2.3.2 Մասնակցության և բազմազանության խթանում 37
ՄԱՍ III. ԻՐԱԳՈՐԾՈՒՄ 38
3.1 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 38
3.2 ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 41
3.3 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 41
3.4 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 42
ՀԱՎԵԼՎԱԾ I. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ 44
ՀԱՎԵԼՎԱԾ II. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 51
ՀԱՎԵԼՎԱԾ III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 53
ՀԱՎԵԼՎԱԾ IV. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ/ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 55

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԱՄՆՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	ՀՀ արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
Բուդապեշտի կոնվենցիա	Կոնվենցիա կիբեռհանցագործությունների մասին
գործողությունների ծրագիր	Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագիր Հայաստանի համար
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
Լանզարոտի կոնվենցիա	Եվրոպայի խորհրդի կոնվենցիան սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին
ԽԿԿ	Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե
ԾԿՄ	Ծրագրի կառավարման մեթոդաբանություն
ԿԱՄ	Կանխարգելման ազգային միջոց
Կենտրոն	Եվրոպայի խորհրդի Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոն
Կոնգրես	Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես
Հանձնակատար	Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար
ՀՀՄ	Հայաստանի համայնքների միություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ ԿԶՆ	Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակ
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄԻՊ գրասենյակ	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՆԿ	Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե
ՇԿԽԿ	Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե
ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՍԲ	Սովորական բյուջե
ՍԻԵԿ	Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե
Ստամբուլի կոնվենցիա	Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին

ՎԱԼ	Վեճերի այլընտրանքային լուծում
Վենետիկի հանձնաժողով	Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով
Վերանայված ԵՍԽ	Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա
ՎՁՄ	Վստահություն ձևավորող միջոցառումներ
ՏՊՄ	Տվյալների պաշտպանության մարմին
Օվեդոյի կոնվենցիա	Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա
ADA	Ավստրիական զարգացման գործակալություն
CCJE	Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ
CCPE	Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհուրդ
CEB	Եվրոպայի խորհրդի զարգացման բանկ
CEPA	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
CEPEJ	Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով
ECLSG	Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
ECRI	Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով
ECRML	Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա
EDC/HRE	«Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների» խարտիա
FCNM	Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա
GDPR	Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգ
GIZ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
GOSI	սեռական կողմնորոշում և սեռային ինքնություն
GR-DEM	Ժողովրդավարական հարցերով զեկուցողների խումբ
GRECO	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ
GRETA	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խումբ
HELP	Մարդու իրավունքների թեմայով իրավաբանների կրթության եվրոպական ծրագիր
MONEYVAL	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող կոմիտե
ODGP	Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակ
PGG	Եվրոպայի խորհրդի – Եվրոպական միության լավ կառավարման համատեղ ծրագրային գործընկերություն. նախկինում՝ ծրագրային համագործակցության կառուցակարգ (PCF)
SDC	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
SIDA	Շվեդիայի միջազգային զարգացման գործակալություն

ՄԱՍ Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

1.1.1 Հայաստանը և Եվրոպայի խորհուրդը

Հայաստանը Եվրոպայի խորհրդին անդամակցել է 2001 թ. հունվարի 25-ին՝ որպես ԵԽ-ի 42-րդ անդամ պետություն: Ըստ այդմ, Հայաստանը ստանձնել և համաձայնել է կատարել մի շարք կոնկրետ պարտավորություններ, որոնք թվարկված են Եվրոպայի խորհրդին անդամակցելու Հայաստանի Հանրապետության դիմումի վերաբերյալ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) թիվ 221(2000)[1] կարծիքում: Հայաստանը նաև ընդունել է Կանոնադրության 3-րդ հոդվածով բոլոր անդամ պետությունների համար նախատեսված պարտականությունները. դրանք են՝ հետևել բազմակարծիք ժողովրդավարության և իրավունքի գերակայության սկզբունքներին, հարգել իր իրավադատության ներքո գտնվող բոլոր անձանց մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Առ այսօր Հայաստանը ստորագրել և վավերացրել է Եվրոպայի խորհրդի 62 համաձայնագիր և պարտավորվել է ակտիվորեն մասնակցել Եվրոպայի խորհրդի մի շարք մեխանիզմների, ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ), Նախարարների կոմիտե (ՆԿ), Խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ), Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես (Կոնգրես), Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար (Հանձնակատար), Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով (ECRI), Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտե (CPT), Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO), Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող կոմիտե (MONEYVAL), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե (ECSR), Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա (FCNM), Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խումբ (GRETA), Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (ECRML):

2005 թվականից Հայաստանն օգտվել է Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրերի շրջանակներում իրականացվող համագործակցային ծրագրերից: Նախորդ ծրագրերը, որոնց աջակցել է Եվրոպական միությունը (ԵՄ), նպատակաուղղված են եղել արդարադատության համակարգի, այդ թվում՝ դատական իշխանության անկախության և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը՝ քրեական արդարադատության համակարգը եվրոպական չափանիշներին մոտարկելու և վատ վերաբերմունքի դեմ պայքարելու, կալանավորների մարդու իրավունքների պաշտպանությունն ու բուժծառայությունների հասանելիությունն ապահովելու միջոցով բանտերում նրանց պահման պայմանները բարելավելու և բարձրագույն կրթության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարելու, ինչպես նաև ընտրական օրենսդրության և պրակտիկայի բարեփոխումը խթանելու նպատակով: Նույն կերպով՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կամավոր հանգանակություններն օգտագործվել են զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառությունն ամրապնդելու, պրոբացիայի ծառայություն ստեղծելու և դրանից օգտվելը խթանելու, ինչպես նաև տեղական ինքնակառավարումն ու ապակենտրոնացումը խթանելու նպատակով:

Եվրոպայի խորհուրդն իր առջև նպատակ է դրել աջակցել ձեռնարկված առաջնահերթ բարեփոխումներին՝ երկրի ժողովրդավարական օրակարգն առաջ տանելու ուղղությամբ:

[1] Եվրոպայի խորհրդին անդամակցելու ՀՀ դիմումի վերաբերյալ Թիվ 221 կարծիք, 28.06.2000թ.:

1.1.2 Եվրոպայի խորհրդի տեխնիկական աջակցության ծրագրերի առավելությունը

Եվրոպայի խորհրդի տեխնիկական աջակցության ծրագրերը մի յուրօրինակ, անքակտելի ռազմավարական եռանկյունի են կազմում, որտեղ մեկտեղված են սահմանված չափանիշները, մոնիթորինգն ու համագործակցությունը (գծապատկեր 1). իրավական առումով պարտադիր այս չափանիշները մշակվում են սերտորեն հաշվի առնելով մոնիթորինգը, որն իրականացվում է անկախ մեխանիզմների կողմից, և լրացվում են այդ չափանիշների կիրառումը դյուրացնող տեխնիկական համագործակցությամբ: Կազմակերպության գործողությունները կազմվում և իրականացվում են այն բնագավառներում, որտեղ Եվրոպայի խորհուրդն ունի կայացած փորձագիտական կարողություններ և լրացուցիչ առավելություններ:



Գծապատկեր 1. Եվրոպայի խորհրդի ռազմավարական եռանկյունի

1.1.3 Մոնիթորինգային մեխանիզմի և փորձագիտական խորհրդատվական մարմինների հիմնական եզրակացությունները

Սույն գործողությունների ծրագիրը մեծ մասամբ հիմնված է Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի և փորձագիտական խորհրդատվական մարմինների՝ Հայաստանի առնչությամբ վերջերս ընդունած որոշումների, վճիռների, հանձնարարականների, զեկույցների եզրակացությունների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախորդ գործողությունների ծրագրով գրանցած արդյունքների վրա: Այստեղ հաշվի են առնված Գլխավոր քարտուղարի՝ Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության վերաբերյալ տարեկան զեկույցում արծարծված մարտահրավերները:

Բացի այդ, սույն գործողությունների ծրագրում արտացոլված են Հայաստանի առաջնահերթ բարեփոխումները և հատկապես Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում, Հայաստանի և Եվրոպական միության միջև 2017 թ. նոյեմբերի 24-ին ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում (CEPA), Հայաստանի առանձին ոլորտային ռազմավարական ծրագրերում, որոնցից են Տարածքային զարգացման 2016-2025 թթ. ռազմավարությունը, Դատաիրավական բարեփոխումների 2018-2023[2] թթ. ռազմավարությունը, Ապակենտրոնացման ճանապարհային քարտեզի նախագիծը և այլն, նշվածները: Եվրոպայի խորհուրդն իր նպաստն է ունեցել վերջին երկու ռազմավարական փաստաթղթերի մշակմանը:

Սույն գործողությունների ծրագիրը պատրաստելիս և, մասնավորապես, բարեփոխումներին ուղղված համագործակցային տեխնիկական աջակցության ծրագրերը կազմելիս հաշվի են առնվել Եվրոպայի խորհրդի հետևյալ կառույցների, մոնիթորինգային մեխանիզմների և փորձագիտական խորհրդատվական մարմինների վերհանած բացերը:

[2] ՀՀ կառավարության կողմից դեռ չի հաստատվել:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

- **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)** Հայաստանին վերաբերող նախադեպային իրավունք մասնավորապես ժամկետային զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի, խոշտանգման, մահվան և արդյունավետ քննության ու բավարար բուժօգնության բացակայություն և ապօրինի կալանավորում:
- **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (ՆԿ)** որոշումը կալանքի ընթացքում բուժօգնության բացակայությանը վերաբերող վճիռների կատարման մասին:
- **ՆԿ-ի** հանձնարարականը զինծառայողների իրավունքների մասին:
- **Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ)** թիվ 2077 (2015) բանաձևը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կողմ հանդիսացող պետություններում նախնական կալանքի չափաշահման վերաբերյալ:
- **Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI)** հանձնարարականները Հայաստանի վերաբերյալ, որտեղ ընդգծված են խտրականության դեմ պայքարի իրավական և ինստիտուցիոնալ դաշտին առնչվող խնդիրներն ու ինտեգրման ազգային ռազմավարության առաջ մղումը:
- **Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի (ՇԿԽԿ)** հանձնարարականները, որտեղ կոչ է արվում փոքրամասնությունների իրավունքների խթանման ուղղությամբ ցուցաբերել նախաձեռնողական մոտեցում, ընդլայնել եզդի աղջիկների համար հանրակրթության հասանելիությունը, իսկ ազգային փոքրամասնությունների բոլոր երեխաների համար՝ նախադպրոցական կրթության հասանելիության ապահովմանն ուղղված ջանքերը և բրեականացնել պարտադրված ամուսնությունները:
- **ՆԿ-ի** թիվ (2018)5 բանաձևը Հայաստանի կողմից Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի (FCNM) կիրառման վերաբերյալ:
- **Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ECRML)** հանձնարարականը, որտեղ կոչ է արվում նախաձեռնողական մոտեցում ցուցաբերել փոքրամասնությունների լեզուների պաշտպանության և լրատվամիջոցներով, հանրային կյանքում և վարչական ու դատական մարմիններում դրանց առաջ մղման ուղղությամբ:
- **ՆԿ-ի** թիվ (2017)2 հանձնարարականը Հայաստանի կողմից ECRML-ի կիրառման վերաբերյալ:
- **Մարդու իրավունքների հանձնակատարի (Հանձնակատար)** հանձնարարականները մարդու իրավունքների լուրջ խախտումների, այդ թվում վատ վերաբերմունքի, նախնական կալանքի չարաշահման վերաբերյալ բողոքների արդյունավետ քննության և կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ:
- **Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ESCR)** եզրակացությունները վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված ESC) ընդունված դրույթների կիրառման վերաբերյալ՝ իրավական դաշտի և գործնական կիրարկման թերացումների ընդգծմամբ:
- **Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի եվրոպական կոնվենցիայի** հանձնարարականը խոցելի վիճակում գտնվող երեխաների, հատկապես, գյուղական շրջաններում մանկական աշխատանքի վտանգի ենթակա երեխաների, եզդիական համայնքի աղջիկների, երեխաների խնամք իրականացնող հաստատություններում տեղավորված երեխաների թրաֆիքինգի կանխարգելման գործառույթի ամրապնդման վերաբերյալ:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

- **Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի)** կարծիքները սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների, մասնավորապես դատական համակարգի և դատախազության անկախությանն ու հաշվետվողականությանն ուղղված բարեփոխումների վերաբերյալ[3]:

[3] CDL-AD(2015)038—CDLAD(2017)019e-

- **Մարդու իրավունքների հանձնակատարի (Հանձնակատար)** հանձնարարականները դատական համակարգի անկախության, անաչառության և արդյունավետության վերաբերյալ և կողմերի հավասարության, պաշտպանության իրավունքի և նախնական կալանքի վերաբերյալ:
- **Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE)** կարծիքները դատավորների անկախության, անաչառության և կոմպետենտության վերաբերյալ, այդ թվում Դատարանների նախագահների վերաբերյալ թիվ 19(2016) կարծիքը:
- **Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի (CCPE)** կարծիքները դատախազներին վերաբերող եվրոպական նորմերի և սկզբունքների մասին:
- **Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ)** «Եվրոպական դատական համակարգեր. արդարադատության արդյունավետություն և որակ» զեկույցը (2018 թ. հրատարակություն) և «Հայաստան. գնահատման միջոցառումներ» զեկույցը (2016 թ. հրատարակություն):
- **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (ՆԿ)** թիվ (2000)21 հանձնարարականը իրավաբանի մասնագիտությամբ զբաղվելու ազատության վերաբերյալ:
- **Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի (CPT)** հանձնարարականները Հայաստանի մասով՝ կապված ոստիկանության կողմից ձերբակալված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխարգելման միջոցառումների, քրեակատարողական հիմնարկներում և մյուս փակ հաստատություններում ոչ բավարար քանակով աշխատակիցների և նյութատեխնիկական պայմանների, գերբեռնվածության և առողջապահական ծառայությունների խնդրի լուծման և պրոբացիայի ու էլեկտրոնային եղանակով մշտադիտարկման հնարավորությունների ընդլայնման հետ[4]:
- **Հանձնակատարի** հանձնարարականները խոսքի ազատության և մամուլի ազատության վերաբերյալ:
- Անդամ պետություններին ուղղված **ՆԿ-ի հանձնարարականներն** խոսքի ազատության, մամուլի բազմակարծության և լրատվամիջոցների սեփականատարերի մասին տեղեկատվության թափանցիկության և համացանցի վերաբերյալ:
- **Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO)** հանձնարարականները համատեղ կատարված գնահատման առաջին և երկրորդ շրջափուլերի արդյունքների հիման վրա, և պատգամավորների, դատավորների և դատախազների մասով կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ՝ գնահատման չորրորդ շրջափուլի արդյունքներով:
- **Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող կոմիտեի (MONEYVAL)** եզրակացությունները Հայաստանի վերաբերյալ՝ կապված Հայաստանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին օրենսդրության գործնական կիրառության հետ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- **Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի)** համատեղ կարծիքը Ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ և երկրորդ համատեղ կարծիքը Ընտրական օրենսգրքի վերաբերյալ, համատեղ կարծիքը Քաղաքական կուսակցությունների մասին սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ, համատեղ կարծիքը Հանրաքվեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ:
- **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ)** բանաձևերը Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների գործունեության վերաբերյալ և 2017 թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների դիտարկման զեկույցը:
- **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)** Ընտրությունների դիտորդական առաքելության հայտարարությունը

[4] CPT/Inf(2016)31

խորհրդարանական ընտրությունների նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ և 2017 թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցը:

- **Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO)** հանձնարարականները քաղաքական գործընթացների թափանցիկությունը, անկախությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու անհրաժեշտության մասին:
- **Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես)** Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան և դրա Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին լրացուցիչ արձանագրությունը:
- **Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես)** Հայաստանում տեղական ժողովրդավարության մասին թիվ 351(2014) հանձնարարականը, որը հորդորում է գործողություններ ձեռնարկել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի և Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին լրացուցիչ արձանագրության դրույթները կատարելու համար:
- **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (ՆԿ)** թիվ (2018)4 հանձնարարականը ժողովրդավարական գործընթացներում մասնակցության, ինստիտուցիոնալ կարողությունների և տեղական ֆինանսների վերաբերյալ:

Սույն գործողությունների ծրագրում ներառված համագործակցային միջոցառումները կազմելիս օգտագործվել են Եվրոպայի խորհրդի համապատասխան այլ կոնվենցիաներ և իրավական ակտեր ևս, օրինակ՝ «Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների» խարտիան (CEDC/HRE):

Սույն գործողությունների ծրագրում հաշվի են առնված Հայաստանի համար իրականացված 2015-2018 թթ. գործողությունների ծրագրով գրանցված արդյունքները.[5]

- Փոփոխված Սահմանադրության ընդունմամբ իրավունքները և հիմնարար ազատությունները երաշխավորող մեխանիզմները և արդարադատության ու տեղական ինքնակառավարման համակարգերն ու դրանց կիրարկումը մոտարկվել են եվրոպական չափանիշներին:
- Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) մասին սահմանադրական օրենքի ընդունմամբ ամրապնդվել են հաստատության մարդու իրավունքների պաշտպանության և խթանման դերը և կարողությունները, այդ թվում՝ կանխարգելման ազգային մեխանիզմը:
- Քրեական դատավարության մասին օրենսգրքի նախագծի բարելավման շնորհիվ կատարելագործվել է վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարի իրավական դաշտը և բարելավվել են քննիչների 112 թեկնածուների և 650 քննիչների՝ վատ վերաբերմունքի դեպքերի մոնիթորինգ իրականացնելու և քննելու մասնագիտական հմտությունները:
- Կատարելագործված իրավական դաշտի շնորհիվ բարելավվել է մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում:
- Բարձրացվել է մարդու իրավունքների չափանիշների մասին համապատասխան շահակիցների իրազեկության մակարդակը, բարելավվել են ուսումնակրթական հաստատությունների՝ մարդու իրավունքների չափանիշները զինված ուժերում խթանելու կարողությունները, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) համապատասխան վճիռները կատարելու ՀՀ կառավարության կարողությունը:
- Ընդունվել է Ընտանեկան բռնության մասին ազգային օրենքը և ստորագրվել է Ստամբուլի կոնվենցիան, որը դրա հետագա վավերացման նախնական քայլն է:
- Ընդունվել է Սահմանադրական դատարանի մասին օրենքը, որը հիմնականում համապատասխանում է եվրոպական չափանիշներին:
- Ընդունվել է Դատական օրենսգրքի մասին սահմանադրական օրենքը, որը հող է նախապատրաստում դատական համակարգի անկախության ընդլայնման համար՝ դատական

[5] https://rm.coe.int/plan-d-action-armenie-2015-2018-fr/1680730d97:

համակարգում ներդնելով կառավարման և վարչարարության մի շարք բարելավված մեխանիզմներ, որոնցից է Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) ստեղծումը:

- Դատախազության մասին նոր օրենքը, որը բարելավում է դատախազների պաշտոնի նշանակման ընթացակարգերը և ուժեղացնում դատախազների հարցերով զբաղվող էթիկայի հանձնաժողովը:
- Ընդունվել է Քաղաքացիական դատավարության մասին նոր օրենք:
- Բարելավվել է վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմներին վերաբերող իրավական և ինստիտուցիոնալ դաշտը՝ ապահովելով արդարադատության հասանելիության աստիճանի բարձրացում:
- Ընդունվել և աստիճանաբար ուժի մեջ է մտել Պրոբացիայի մասին օրենքը, որին հաջորդել է պրոբացիայի ծառայության ստեղծումը և դրա հաջող գործարկումը երկու մարզերում:
- Կատարվել են օրենսդրական, ինստիտուցիոնալ բարեփոխումներ և բարձրացվել են մասնագետների որակավորումները, ինչի շնորհիվ ընդլայնվել են բանտերում տրամադրվող բուժծառայությունները, այդ թվում՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծման, ավելի քան 800 բուժաշխատողների և ոչ բժշկական կազմի աշխատողների վերապատրաստման, ինչպես նաև 11 բանտերում առողջության առաջնային պահպանման ստորաբաժանումների պայմանների բարելավման շնորհիվ:
- Բարձրագույն կրթության մասին օրենքի լրամշակման և բարեվարքության մեխանիզմների ձևավորման շնորհիվ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավելի «զինված» են կոռուպցիան կանխելու համար:
- Ընդունվել են լրամշակված Ընտրական օրենսգիրքը և Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը, որոնց շնորհիվ համապատասխանաբար բարելավվել է ընտրությունների անցկացման իրավական ու ինստիտուցիոնալ դաշտը, և ազատականացվել են քաղաքական կուսակցությունների ստեղծման, գրանցման և գործունեության կարգավորումները:
- Բարելավվել է տեղական ինքնակառավարման ոլորտի իրավական կարգավորման շրջանակը՝ ապակենտրոնացման գործընթացի և տեղական ինքնակառավարման զարգացմանը, ինչպես նաև մինչև 2018 թ. հունիս ամիսը տևած՝ համայնքների միավորման գործընթացի նպաստելու համար, որի արդյունքներով Հայաստանի համայնքների թիվը նվազել է՝ 915-ից 502-ի, որոնցից 52-ը խոշորացված համայնքներն են: Աջակցություն է ցուցաբերվել Հայաստանի համայնքների միությանը (ՀՀՄ)՝ վերջինիս ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործում, որպեսզի ՀՀՄ-ն կարողանա ազդեցություն ունեռնալ տեղական ինքնակառավարման և տեղական ժողովրդավարության վերաբերյալ ազգային քաղաքական օրակարգի վրա:
- Արդարադատության ակադեմիան զարգացրել է իր կարողությունները՝ մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան բարեփոխումների իրականացման ազգային կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու ուղղությամբ:

Խորհրդակցական գործընթաց

Սույն գործողությունների ծրագիրը Հայաստանի իշխանությունների հետ հանգամանալից խորհրդակցությունների արդյունք է: Փաստաթղթի պատրաստման ընթացքում խորհրդակցություններ են անցկացվել նաև միջազգային գործընկերների, հիմնականում, Եվրոպական միության հետ:

2015-2018 թվականների գործողությունների ծրագրի իրագործումը գնահատելու նպատակով Եվրոպայի խորհրդի քարտուղարությունը և Հայաստանի իշխանությունները 2018 թվականի հունիսի 12-ին Երևանում գումարեցին համակարգող կոմիտեի նիստ: Հոկտեմբերի 2-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն (ՆԿ) ուսումնասիրեց գործողությունների ծրագրի իրագործման ավարտական հաշվետվությունը[6] և իր 1327-րդ նիստի ընթացքում ի գիտություն ընդունեց դրա արդյունքներն ու Քարտուղարությանը հրահանգեց պատրաստել Եվրոպայի խորհրդի նոր՝ 2019-2022 թթ. գործողությունների ծրագիրը Հայաստանի համար:

[6] https://rm.coe.int/plan-d-action-armenie-2015-2018-rapport-final/16808e6ef8:

1.2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն գործողությունների ծրագիրը ռազմավարական ծրագրային փաստաթուղթ է 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Ծրագրի նպատակն է օժանդակել մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում Հայաստանի օրենսդրության, հաստատությունների ու պրակտիկայի՝ եվրոպական չափանիշներին հետագա համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումներին, և այսպիսով օժանդակել Հայաստանի Հանրապետության՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված ջանքերին: Այս նպատակներին հասնելու ճանապարհին սույն գործողությունների ծրագիրը կնպաստի նաև ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի իրագործմանը: Գործողությունների ծրագիրը նաև նպաստի 2017 թ. նոյեմբերի 24-ին ստորագրված ԵՄ-ՀՀ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) նպատակների իրագործմանը:

Եվրոպայի խորհուրդը կշարունակի Հայաստանի իշխանություններին օժանդակել ռազմավարական նշանակության բնագավառներում ձեռնարկված բարեփոխումներն առաջ տանելու (և հնարավորության դեպքում՝ ավարտին հասցնելու) գործում. մասնավորապես՝

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպի կիրարկում ազգային մակարդակում, այդ թվում՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշների և ՄԻԵԴ-ի նախադեպի՝ ազգային մակարդակում ներդաշնակ կիրառում դատական իշխանության կողմից:
- Քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների և դրանց իրագործման՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանության ապահովում, այդ թվում կապված խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման և նախնական կալանքի՝ եվրոպական չափանիշներին համապատասխան կիրառումն ապահովելու հետ:
- Զինված ուժերում մարդու իրավունքների չափանիշների կիրառման ընդլայնում:
- Գենդերային հավասարության խթանում (նաև զինված ուժերում)՝ ապահովելով արդարադատության հավասար հասանելիությունը և կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը:
- Քրեակատարողական համակարգի բարեփոխում եվրոպական չափորոշիչներին համապատասխան՝ կատարելագործելով բուժօգնության համակարգը բանտերում և ձևավորելով կայացած պրոբացիայի ծառայություն:
- Տեղեկատվական անվտանգության, հանրային տեղեկատվության հասանելիության և անձնական տվյալների պաշտպանության կատարելագործում:
- Անկախ, թափանցիկ, հաշվետու և արդյունավետ դատական իշխանության ամրապնդում, այդ թվում աջակցություն Դատական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի հետագա փոփոխություններին ու իրականացմանը՝ եվրոպական չափորոշիչներին համապատասխան:
- Վեճերի լուծման այլընտրանքային համակարգի ամրապնդում և կիրառության ընդլայնում՝ եվրոպական չափորոշիչներին համապատասխան:
- Բարեվարքության խթանում և կոռուպցիայի դեմ պայքար կրթության ոլորտում:
- Տեղական ժողովրդավարության որակի բարելավում՝ ապակենտրոնացման քաղաքականության արդյունավետ իրականացման, տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների հզորացման և տեղական իշխանությունների ազգային ասոցիացիաների կարողությունների զարգացման միջոցով:
- Ընտրական օրենսդրության և պրակտիկայի բարելավում, այդ թվում պայքար ընտրակեղծիքի դեմ, ինչի շնորհիվ կբարձրանա վստահությունն ընտրական գործընթացի նկատմամբ:
- Քաղաքական գործընթացի թափանցիկության բարելավում, այդ թվում կուսակցությունների ֆինանսավորման մասին օրենսդրության բարելավման միջոցով:
- Պայքար կիբեռհանցավորության դեմ:

Եվրոպայի խորհուրդը և Հայաստանի իշխանությունները համատեղ նախանշել են համագործակցության նոր ուղղություններ՝ հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի կառույցների, մոնիթորինգային մեխանիզմների և փորձագիտական խորհրդատվական մարմինների՝ վերջերս կատարած աշխատանքները, մասնավորապես.

- Կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի և կանխարգելման գործառույթ իրականացնող կառույցների կարողությունների ամրապնդում և աջակցություն ոստիկանության համակարգի համակողմանի բարեփոխմանը, որը իրականացվելու է նաև կալանքի տակ պահման պայմանների բարելավման, վատ վերաբերմունքի, կոռուպցիայի խնդիրների լուծման, ինչպես նաև կազմակերպչական ու ռազմավարական պլանավորման միջոցով:
- Աջակցություն Հայաստանին կրթության համակարգի բարեփոխման գործում, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ հետագա պայքարի և ակադեմիական ազատության ապահովման միջոցով, և արդարադատության հասանելիության աստիճանը բարձրացնելու գործում, այդ թվում՝ իրավաբանների, փաստաբանների և նրանց միությունների իրավաբանական և մասնագիտական կարողությունների զարգացման միջոցով:
- Բոլոր հիմքերով խտրականության դեմ հետագա պայքարի, բողոքարկման մեխանիզմների իրավական ու ինստիտուցիոնալ դաշտի և ազգային կարողությունների բարելավում, փոքրամասնությունների իրավունքների արդյունավետ պաշտպանության և խթանման շրջանակի ընդլայնում, այդ թվում՝ փոքրամասնությունների լեզուների օգտագործում տեղական ինքնակառավարման մարմիններում, և կրթության բոլոր մակարդակների հասանելիության ապահովում փոքրամասնությունների երեխաների համար:
- Երեխաների սոցիալական ապահովության և բռնությունից, սեռական շահագործումից ու չարաշահումից երեխաների պաշտպանության համակարգի ուժեղացում, և նրանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների երաշխավորում:
- Տնտեսական և սոցիալական, այդ թվում աշխատանքային իրավունքների պաշտպանության կատարելագործում՝ վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային (վերանայված ԵՍԽ) և դրա լրացուցիչ արձանագրությանը համապատասխան:
- Խոսքի ազատության, լրատվական դաշտի բազմազանության և բազմակարծության և լրագրողների անվտանգության զարգացում և համացանցի կառավարման խթանում՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան:
- Կենսաբժշկության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության ընդլայնում և երիտասարդական հասարակական կազմակերպությունների զորացում՝ երիտասարդական քաղաքականությունների մշակման նպատակով:

Սույն գործողությունների ծրագրի առանցքը լինելու է գործող օրենսդրական դաշտի հետագա կատարելագործումն ու դրա կիրառման ապահովումը. սա վերաբերում է հատկապես փոփոխված Սահմանադրությունից բխող օրենքներին, որոնց մի մասը պատրաստվել են նախորդ գործողությունների ծրագրերի համատեքստում: Շարունակվելու է աջակցությունը համապատասխան ներպետական կառույցների բարեփոխումներ իրականացնելու կարողությունների ամրապնդմանը: Սա ներառում է նաև գենդերային հարցերին անդրադառնալու և իշխանությունների ու քաղաքացիական հասարակության կառուցողական երկխոսությունը դյուրացնելու կարողությունները: Աջակցություն է տրամադրվելու նաև իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների ու ներպետական աշխատակարգերի՝ եվրոպական չափանիշներին հետագա համապատասխանեցմանը ժողովրդավարական բարեփոխման գործընթացի համատեքստում, որն ակնկալվում է ինտենսիվացնել՝ երկրի իշխանությունների գերակայություններին համապատասխան:
Սույն գործողությունների ծրագրում գերակայություն է գենդերային իրավահավասարության խթանումը: Գենդերային ներառումը՝ եվրոպական չափորոշների և Եվրոպայի խորհրդի հանձնարարականների հիման վրա, կօգնի ավելի լավ հասցեագրել Հայաստանում ապրող բոլոր անհատների կարիքներն՝ առանց խտրականության, և ընդլայնել գործողությունների ծրագրի իրականացման որակն ու արդյունավետությունը:

ՄԱՍ II. 2019-2022 ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև թվարկվում են գործողություններն՝ ըստ 2018-2019 թթ. ծրագրում և բյուջեում սահմանված հենասյուների:

2.1 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2015թ. ընդունված փոփոխված Սահմանադրությամբ ընդլայնվել է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և խթանման իրավական և ինստիտուցիոնալ դաշտը, այդ թվում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան ընդլայնվել է «մարդու իրավունքներ» հասկացությունն ու դրա ընդգրկման շրջանակը: Այդուամենայնիվ, դեռևս առկա է բարեփոխումներ ձեռնարկելու և դրանք իրագործելու ներպետական կարողությունները զարգացնելու անհրաժեշտություն: Դրա համար պահանջվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) կիրառում ներպետական դատարանների կողմից, մարդու իրավունքների պաշտպանության և գենդերային հավասարության կատարելագործում զինված ուժերում, վատ վերաբերմունքի և խոշտանգումների կանխարգելում և դրանց դեմ պայքար, նախնական կալանքի միայն ՄԻԵԿ-ի դրույթներին համապատասխան կիրառում, քրեական և քրեական դատավարության օրենսդրության մեջ մարդու իրավունքների համապատասխան երաշխիքների ապահովում, խտրականության կանխարգելում և դրա դեմ պայքար, գենդերահեն բռնության և երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման կանխարգելում և դրա դեմ պայքար, մարդու իրավունքների պաշտպանություն կենսաբժշկության բնագավառում և այլ գործողություններ:

2.1.1 Մարդու իրավունքների պաշտպանություն

Նշանակալի բարեփոխումների իրագործման շնորհիվ Հայաստանն ուշագրավ առաջընթաց է գրանցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կատարման առումով. այս բարեփոխումները երկրին հնարավորություն են տվել վերջնական դատավճիռներով կարճել 84 գործերից 54-ը (2018 թ. հոկտեմբերի 4-ի դրությամբ): Չնայած այն հանգամանքին, որ ՄԻԵԴ-ում դեռևս մի քանի գործեր են քննվում, Նախարարների կոմիտեի կողմից հատուկ և ստանդարտ հսկողության ենթակա հարցերը մատնացույց են անում նշանակալի կառուցվածքային խնդիրներ, որոնք հետևողական ջանքեր են պահանջում: Հատուկ հսկողության տակ գտնվող գործերը[7] վերաբերում են վատ վերաբերմունքի/խոշտանգումների դեպքերի քննությանը, ժամկետային զինծառայողների մահվան դեպքերին և արդյունավետ քննության բացակայությանը, ազատազրկման մեջ գտնվող անձանց ոչ բավարար բուժօգնությանը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում տեղահանված անձանց բնակարանների և գույքի հասանելիության բացակայությանը: Ստանդարտ հսկողության տակ գտնվող գործերը վերաբերում են նախնական կալանքին, ներպետական վճիռների չկատարմանը կամ ուշացած կատարմանը, արդար դատաքննության սկզբունքի խախտմանը և այլն: Իշխանությունները նշանակալի միջոցներ են ձեռնարկել այս հարցերի լուծման ուղղությամբ՝ որոշ դեպքերում Եվրոպայի խորհրդի աջակցությամբ: Այդուհանդերձ, ազգային մակարդակում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) կիրառումը բարելավելու ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելիս իշխանություններին լրացուցիչ օժանդակություն է անհրաժեշտ: Քրեական օրենսգրքի և Քրեական դատավարության օրենսգրքի համակողմանի փոփոխությունները խիստ կարևոր են վերոնշյալ գործերից որոշները փակելու համար[8]:

---

[7] Համապատասխանաբար՝ Վիրաբյան խումբ, Մուրադյանի գործ, Աշոտ Հարությունյան խումբ, Չիրագովի և այլոց գործեր:

[8] 2018 թ. սեպտեմբերին և հոկտեմբերին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) չորս նոր վճիռ ընդունեց դիմողների նկատմամբ վատ վերաբերմունքի, ապօրինի կալանավորման և արդար դատալսումների բացակայության, կալանավայրում պահման վատ պայմանների և խաղաղ հավաքների ազատության իրավունքի խախտման վերաբերյալ՝ 2008 թ. նախագահական ընտրությունների և դրա հետևանքով 2008 թ. մարտի 1-ին ոստիկանության, անվտանգության ուժերի և ցուցարարների բախումների համատեքստում: Այս վճիռների կատարման համար Եվրոպայի խորհրդի կողմից կարող է ավելի շահագրգիռ օժանդակություն և ավելի ակտիվ համագործակցություն պահանջվել:

- **ՄԻԵԿ-ի համակարգի արդյունավետությունն ազգային և եվրոպական մակարդակում**

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) դրույթների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպի արդյունավետ կիրառման ապահովումն ազգային մակարդակում բոլոր անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի վրա դրված հիմնական պարտականություն է (ինչի մասին հիշեցնում են Բրայթոնի և Բրյուսելի հռչակագրերը): Դրա համար անհրաժեշտ է ավելի բարելավել Կոնվենցիայի հիմնական սկզբունքների ու չափանիշների հասանելիությունը արդարադատության շղթայի մասնակիցների, համապատասխան պետական հաստատությունների, այդ թվում որակավորված իրավաբաններ պատրաստող ուսումնական հաստատությունների, ինչպես նաև հասարակության սոցիալական դերակատարների համար, և վերջիններիս կողմից այդ չափանիշների և սկզբունքների իմացությունը, որպեսզի իրենք կարողանան ազգային մակարդակում ՄԻԵԿ-ի և մարդու իրավունքների այլ չափանիշների կիրառման կոչ անել, մշտադիտարկել և գործնականում կիրառել դրանք: Համապատասխան ազգային շահակիցների՝ ազգային մակարդակում մարդու իրավունքների եվրոպական չափանիշներն արդյունավետորեն կիրառելու կարողությունները զարգացնելու առումով շատ նպաստավոր կլինի Հայաստանի համար հետաքրքրություն ներկայացնող թեմատիկ նյութերի պատրաստումը, ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպի և հրատարակված նյութերի թարգմանությունը հայերեն,[9] որը կմեկտեղվի ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպերի վերաբերյալ աշխատանքային քննարկումներով, վերապատրաստումներով և սեմինարներով: Ակնկալվում է, որ փոփոխություններ կկատարվեն ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի և ՄԻԵԴ-ի վճիռների կատարումն ապահովող վարչության մասով: Շարունակելով այս հաստատության հետ ձևավորված կառուցողական համագործակցության ավանդույթը՝ Եվրոպայի խորհուրդը կշարունակի օժանդակել ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչին՝ իրեն վերապահված լիազորությունները լիարժեք կատարելու համար՝ ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպերի վերաբերյալ աշխատաժողովների, սեմինարների և վերապատրաստումների, ինչպես նաև համապատասխան ուսումնական այցերի միջոցով: Եվրոպայի խորհուրդը նաև պատրաստ է շարունակել իրավաբական ոլորտի մասնագետների վերապատրաստման ազգային կառույցի[10] հետ ձևավորված արգասաբեր համագործակցությունը՝ մարդու իրավունքների թեմայով ուսուցման ավելի շատ հնարավորություններ ստեղծելու նպատակով:

Եվրոպայի խորհրդի փորձագիտական աջակցությունը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող նոր՝ 2019-2020 թթ. գործողությունների ծրագրի նախագծման ու իրականացմանը մաս կկազմի ազգային մակարդակում ՄԻԵԿ-ի համակարգի արդյունավետության բարելավմանն ուղղված համատեղ ջանքերի, ինչը համապատասխանում է ՀՀ իշխանությունների խնդրանքին և ինչի մասին առաջարկվում է գործողությունների ծրագրում:

ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի նախադեպի՝ ազգային մակարդակում արդյունավետ կիրառումն ապահովելու նախապայմաններից է այն, որ ազգային դատարանները պետք է ի վիճակի լինեն որոշումները կայացնել եվրոպական չափանիշների միօրինակ կիրառմամբ, քանի որ ներդաշնակ դատական պրակտիկայի բացակայությունը վնաս է հասցնում իրավական որոշակիությանը և, այսպիսով, մարդու իրավունքների պաշտպանությանն ընդհանրապես:

Բրյուսելի հռչակագրի (2015թ.) սկզբունքներին համապատասխան՝ Եվրոպայի խորհուրդն ազգային իշխանություններին օժանդակել է եվրոպական չափանիշներն ազգային մակարդակում կիրառելու հարցում՝ ՀՀ վճռաբեկ դատարանին տրամադրած աջակցության միջոցով, և այս կերպ առանցքային դերակատարում ունենալով ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի նախադեպի համահունչ և միօրինակ կիրառումն ապահովելու գործում, ինչպես նաև Արդարադատության ակադեմիային տրամադրած աջակցության միջոցով: Չնայած գրանցված

[9] Ներառյալ Juriconsult-ի ամենամյա ակնարկներում, նախադեպային որոշումների ձեռնարկում մեջբերված ամենակարևոր որոշումների իրավաբանական ամփոփագրերը և այլն: Այս բոլոր նյութերը՝ Եվրոպայի խորհրդի տեսանյութերի հետ մեկտեղ կտեղադրվեն ՄԻԵԴ-ի կայքէջում և որպես ուսումնական նյութ կտրամադրվեն գործունեություն իրականացնող բազմաթիվ գործընկերների, այդ թվում՝ դատական ուսումնական կենտրոններ և որակավորված իրավաբանների միություններ, որոնցից են Փաստաբանների պալատը, Արդարադատության ակադեմիան, Հայաստանի Հանրապետության դատավորների միությունը:

[10] Արդարադատության ակադեմիան, Փաստաբանական դպրոցը և Փաստաբանների պալատը:

առաջընթացին՝ դեռևս առկա է ՄԻԵԿ-ն ու ՄԻԵԴ-ի նախադեպն ազգային մակարդակում ավելի ներդաշնակ կիրառելու անհրաժեշտություն:

Հիմնվելով նախորդ շրջանի համագործակցության միջոցով ձեռքբերված արդյունքների վրա՝ Եվրոպայի խորհուրդը շարունակելու է ՀՀ իշխանություններին աջակցել ազգային դատարանների կողմից մարդու իրավունքների չափանիշների ավելի միօրինակ կիրառության ապահովմանն ուղղված հատուկ մեխանիզմների հետագա զարգացման հարցում: Այդ պատճառով ԵԽ-ն կփորձի ընդլայնել երկխոսությունը դատական մարմինների միջև[11] և ուժեղացնել Վճռաբեկ դատարանի դատական դեպարտամենտի ՄԻԵԿ ստորաբաժանումը, որը ստեղծվել է ՄԻԵԿ-ը և ՄԻԵԴ-ի նախադեպը դատական մարմինների որոշումներում միօրինակ կիրառելու հարցում օժանդակելու և ուղղորդելու նպատակով: ՄԻԵԿ ստորաբաժանումը պետք է պատշաճ դիրքավորված լինի ներկայիս դատական բարեփոխումների համատեքստում: Գործողությունների ծրագրի միջոցով նաև փորձ է արվելու համանման կարողություններ ձևավորել դատական համակարգի բոլոր մակարդակներում և զարգացնել դատավորների՝ եվրոպական չափանիշներն ու ազգային դատական նախադեպերը միօրինակ կիրառելու ֆունկցիոնալ կարողությունները՝ այս կերպ նպաստելով բարձրորակ արդարադատության մատուցմանը:

- **Աջակցություն քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին**

Եվրոպայի խորհուրդն օգնել է իշխանություններին քրեական արդարադատության ազգային քաղաքականությունն ու պրակտիկան մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու գործում՝ նշանակալի աջակցություն տրամադրելով նոր Քրեական օրենսգրքի և Քրեական դատավարության օրենսգրքի մշակման գործընթացին և զարգացնելով խոշտանգման ու վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերի քննության և անպատժելիության դեմ պայքարի ազգային կարողությունները՝ եվրոպական չափանիշներին համապատասխան:

Ընթացքի մեջ է քրեական արդարադատության համակարգի բարեփոխումը: Քրեական ոլորտի երկու օրենսգրքերի ընդունման պարագայում Եվրոպայի խորհուրդը կօժանդակի դրանց կիրարկմանը, այդ թվում կաջակցի նոր Քրեական օրենսգրքի և Քրեական դատավարության օրենսգրքին առնչվող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մշակմանը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպին համապատասխան: Համապատասխան մեթոդաբանությունների և վերապատրաստման միջոցով նաև կամրապնդվեն համապատասխան շահակիցների, դատավորների, դատախազների և քննչական կոմիտեի քննիչների՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ պայքարին վերաբերող նոր իրավական կարգավորումները կիրառելու կարողությունները: Եվրոպայի խորհուրդը կշարունակի աշխատել քննչական կոմիտեի հետ՝ այդ կառույցի աշխատանքում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրապնդելու ուղղությամբ: Համագործակցության մեկ այլ հնարավոր ուղղություն է դատախազությունում քրեական հարցերի շուրջ իրավաբանական փոխօգնության նպատակով գործերի կառավարման համակարգի ստեղծումն ու ներդրումը, ինչի խնդրանքով դիմել են ազգային իշխանությունները:

ՄԻԵԿ-ին և ՄԻԵԴ-ի նախադեպին համապատասխան նախնական կալանքի կիրառումը դեռևս լուրջ խնդիր է երկրի համար, ինչը Հանձնակատարի կողմից ընդգծվել է իր 2015 թ. զեկույցում և ճանաչվել է ՄԻԵԴ-ի նախադեպում:[12] Սույն գործողությունների ծրագրի գերակայություններից է լինելու համապատասխան շահակիցների կարողությունների զարգացումը՝ որպես կանխարգելիչ միջոց նախնական կալանքի պատշաճ կիրառությունն ապահովելու նպատակով:

---

[11] Ինչպես առաջարկվել է «Հայաստանում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների միօրինակ կիրառության բարելավման» թեմայով կարիքների գնահատման մեջ, որը պատրաստվել և հրատարակվել է 2014 թվականին՝ «ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի նախադեպերի կիրառման ամրապնդումը Հայաստանում» ծրագրի համատեքստում:

[12] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) մի շարք վճիռներում պարզվել է Հայաստանի կողմից Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում՝ հատկապես ազատազրկման օրինաչափության մասով:

- **Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների կիրառման ընդլայնում և զինվորական ծառայության համակարգում կանանց իրավունքների ու դերի ամրապնդում**

Գրանցված արդյունքների շարունակականությունն ապահովելու և դրանք բազմապատկելու նպատակով Եվրոպայի խորհուրդը մտադիր է շարունակել համագործակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության (ՊՆ) հետ՝ զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառումն ամրապնդելու համատեքստում: Ըստ այդմ, ԵԽ-ն առաջարկում է օժանդակել իշխանություններին ներպետական օրենսդրության մեջ և պրակտիկայում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների շարունակական ներդրման և զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման մեխանիզմների ամրապնդման աշխատանքները շարունակելու հարցում, այդ թվում՝ շարունակելով ուժեղացնել վատ վերաբերմունքի և ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը քննելու պետական կարողությունները: Սույն գործողությունների ծրագրով, նախատեսվում է նպաստել ինչպես զինծառայողների և զինված ուժերում իրավաբանների մասնագիտական կարողությունների, այնպես էլ ՊՆ-ի (ՊՆ-ի մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոն և ուսումնական հաստատություններ) և Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) ինստիտուցիոնալ կարողությունների հետագա զարգացմանը:

Բացի այդ, Եվրոպայի խորհուրդը պատրաստ է օժանդակելու 2018 թվականից զինված ուժերում ծառայության անցած առաջին կին սպաների ակտիվ ներգրավմանը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Կանանց, խաղաղության և անվտանգության վերաբերյալ թիվ 1325 բանաձևի (UNSCR 1325) մասով իր միջազգային պարտավորությունները կատարելու Հայաստանի ազգային գերակայությանը համապատասխան:[13] Հատուկ շեշտադրվելու է բանակում կանանց դերի և իրավունքների խթանումն ու նրանց ծառայության պայմանների բարելավումը: Եվրոպայի խորհուրդը նաև առաջարկում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել զինծառայողների համար արդարադատության հասանելիության բարելավմանն ու նրանց սոցիալական իրավունքների խթանմանը:

Ակնկալվող արդյունքներ

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպի արդյունավետ կիրառում ազգային մակարդակում

- ✓ Իշխանությունները՝ եվրոպական չափանիշներին համապատասխան հաստատում և իրագործում են 2020-2022 թթ. մարդու իրավունքների գործողությունների նոր ազգային ծրագիրը:
- ✓ Դատական համակարգում ՄԻԵԿ-ը, ՄԻԵԴ-ի նախադեպը և ազգային դատական նախադեպն ավելի ներդաշնակ են կիրառվում:
- ✓ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչն իր կատարելագործված կարողություններն օգտագործում է իր լիազորություններն ու գործառույթները կատարելիս:
- ✓ ՄԻԵԿ-ն ավելի լավ է վկայակոչվում և կիրառվում իրավական ոլորտի մասնագետների և քաղաքացիական հասարակության կողմից:

Հիմնական ազգային գործընկերներ՝ ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ, Իրավաբանների միություններ, Վճռաբեկ դատարան, Արդարադատության ակադեմիա, Փաստաբանների պալատ, Հայաստանի Հանրապետության դատավորների միություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (ՄԻՊ գրասենյակ), քաղաքացիական հասարակություն:

[13] Հայաստանը ներկայումս ակտիվորեն աշխատում է գործողությունների ազգային ծրագրի մշակման վրա, որպեսզի ապահովի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Կանանց, խաղաղության և անվտանգության մասին թիվ 1325 բանաձևի (UNSCR 1325) կիրարկումը, այդ թվում՝ ձևավորելով զինված ուժերում կանանց իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմ:

Աջակցություն քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին

- ✓ Քրեական օրենսդրությունն ընդունվել և կիրարկվում է եվրոպական չափանիշներին համապատասխան:
- ✓ Իրավական ոլորտի մասնագետները, այդ թվում դատավորներ, դատախազներ և քննիչներ, ներդաշնակ կիրառում են եվրոպական չափանիշներին համապատասխանող նոր քրեական օրենսդրությունը:
- ✓ Նախնական կալանքի ինստիտուտը կիրառվում է ճիշտ և համաչափ՝ ՄԻԵԿ-ի չափանիշներին համապատասխան:

Հիմնական ազգային գործընկերներ՝ ՀՀ ԱՆ, Ազգային ժողով, ՄԻՊ:

Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների կիրառման ընդլայնում և զինվորական ծառայության համակարգում կանանց իրավունքների ու դերի ամրապնդում

- ✓ Զինված ուժերում կիրառվում են մարդու իրավունքների ավելի լավ պաշտպանություն և խթանում ապահովող իրավակարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակներ:
- ✓ Ուսումնական հաստատություններն մասնակցային դերակատարություն ունեն զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործընթացում:
- ✓ Զինված ուժերում արժևորվում է կին զինծառայողի նկարագիրը:
- ✓ Զինծառայողների համար արդարադատության հասանելիությունը բարելավվել է:

Հիմնական ազգային գործընկերներ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն (ՊՆ), ԱՆ, Կրթության և գիտության նախարարություն, Երևանի պետական համալսարան, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (ՄԻՊ գրասենյակ) և քաղաքացիական հասարակություն:

2.1.2 Մարդու իրավունքների և արժանապատվության խթանում

- **Գենդերային իրավահավասարություն, պայքար կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ, կանանց համար արդարադատության հասանելիության բարելավում**

Վերջին տարիներին Հայաստանը քայլեր է ձեռնարկել գենդերային իրավահավասարությունը խթանելու, ընտանեկան բռնության դեմ պայքարելու և բռնությունից տուժած կանանց իրավական պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ ընդունելով համապատասխան օրենսդրություն և քաղաքականություններ: 2017 թ. դեկտեմբերին Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունմամբ[14] և 2018 թ. հունվարին Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպական կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) ստորագրմամբ ընդգծվեց ընտանեկան բռնության դաշտում աշխատելու ՀՀ կառավարության հանձնառությունը: Բայցևայնպես, Ստամբուլի կոնվենցիայի չափանիշներին լիարժեք համապատասխանելու համար օրենքը պետք է լրամշակվի:

Բարելավվել է իրավունքների խախտման պարագայում իրավական պաշտպանության և պաշտպանության արդյունավետ միջոցների հավասար հասանելիությունը կանանց համար, սակայն դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, այդ թվում գենդերային իրավահավասարության և կանանց համար արդարադատության հասանելիության մասով իրավական, ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական և մշակութային տևական խոչընդոտներ և կանանց համար իրավաբանական օգնության և աջակցման ծառայությունների սահմանափակ հասանելիություն:

[14] Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության զոհերի պաշտպանության և ընտանիքում խաղաղության վերականգնման մասին օրենք:

Այդ խնդիրները լուծելու նպատակով և շարունակելով զարգացնել նախկին համագործակցության արդյունքները՝ Եվրոպայի խորհուրդը շարունակելու է աջակցել համապատասխան շահակիցներին՝ գենդերային իրավահավասարությունը խթանելու, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը միջազգային և եվրոպական չափանիշներին ու լավագույն փորձին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակներին (ՄԱԿ ԿԶՆ) և, հատկապես, գենդերային իրավահավասարության 5-րդ նպատակին համապատասխան իրականացնելու գործում: Սա կիրականացվի դատական և իրավապահ մարմինների իրազեկության բարձրացման և կարողությունների զարգացման հետագա և այլ գործողությունների միջոցով: Սույն գործողությունների ծրագրի կենտրոնում լինելու է նաև արդարադատության հասանելիության բարելավումը կանանց համար և, հատկապես, այն կանանց, որոնք տուժել են բռնությունից և խոցելի վիճակում են.[15] սա ենթադրում է արդարադատության շղթայում գենդերային թեմատիկայի ներառում և տեղեկատվության ու իրավաբական օգնության ավելի լայն հասանելիության ապահովում: Ստամբուլի կոնվենցիայի վավերացման, ազգային օրենսդրության և քաղաքականությունների բարելավման ուղղությամբ Հայաստանի կողմից տարվող ջանքերին և ընտանեկան բռնության մասին նոր օրենքի կիրարկմանն աջակցելը շարունակելու են լինել սույն գործողությունների ծրագրի գերակայություններ:

- **Խտրականության բացառում**

Խտրականության դեմ պայքարը կառավարության գերակայություններից է և Եվրոպական միության կողմից մարդու իրավունքների պաշտպանությանը տրամադրվող ուղղակի բյուջետային աջակցության նախապայմանների բաղադրիչ: Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI)՝ հավասարության հարցերով անկախ մարմին[16] ստեղծելու հանձնարարականներին ի պատասխան ՀՀ իշխանությունների ձեռնարկած քայլերի արդյունքը Իրավական հավասարության մասին նոր օրենքի նախագիծն է, որով նախատեսվում է Մարդու իրավունքների պաշտպանին (ՄԻՊ) տալ լիազորությունների և գործառույթների նոր շրջանակ՝ որպես հավասարություն ապահովող մարմին, որին վստահված կլինի խտրականության զոհերի խախտված մարդու իրավունքների վերականգնմանն աջակցելու գործառույթը: Խտրականության բացառման համապարփակ օրենք դեռևս չի ընդունվել:

Սույն գործողությունների ծրագրով օժանդակություն կտրամադրվի բոլոր հիմքերով խտրականության դեմ արդյունավետ գործողություններ ձեռնարկելու իշխանությունների ջանքերին՝ համապատասխան իրավական դաշտը, քրեական օրենքները[17] և այլ օրենսդրական ակտերը, այդ թվում՝ Հավասարության մասին օրենքի[18] նախագիծը համապատասխանեցնելով խտրականության բացառման եվրոպական և միջազգային չափանիշներին: Սույն գործողությունների ծրագրով իշխանություններին օժանդակություն կտրամադրվի խտրականության զոհերի համար արդարադատության հասանելիությունը բարելավելու գործում՝ ամրապնդելով հատուցման մեխանիզմները և խտրականության բացառման քաղաքականությունները:

Ըստ ECRI-ի եզրակացությունների, ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության խոսքի դեմ չպայքարելու և ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ քրեական հանցանքների չհետաքննելու հետևանքով անպատժելիության մթնոլորտ է ձևավորվել: Այդ պատճառով սույն գործողությունների ծրագրի շրջանակներում իշխանություններին օժանդակություն կտրամադրվի ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բռնության և դրա հրահրման կանխարգելումն ու դրա դեմ պայքարը բարելավելու հարցում, ինչը կիրականացվի նաև համապատասխան շահակիցների կարողությունների զարգացման և իրազեկման, ինչպես նաև ատելության խոսքի դեպքերի վերաբերյալ վիճակագրության բարելավման միջոցով: Հիմնվելով

[15] Գյուղական բնակավայրերում և փոքրամասնությունների խմբերում ապրող:

[16] Ինչպես առաջարկվել է Ռասիզմի և ռասսայական խտրականության դեմ պայքարի ազգային օրենսդրության վերաբերյալ թիվ 7 ընդհանուր քաղաքականության հանձնարարականում:

[17] Նոր Քրեական օրենսգրքի համատեքստում և ՀՀ արդարադատության նախարարության (ԱՆ) խնդրանքով՝ Եվրոպայի խորհուրդը 2018 թ. մարտին ներկայացրել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների՝ խտրականությունը մի շարք, այդ թվում՝ սեռական կողմնորոշման հիմքերով քրեական հանցանք որակող օրենսդրության համեմատական վերլուծություն:

[18] Հատկապես հավասարության հարցերով անկախ մարմնի լիազորությունների և գործողությունների ու խտրականության զոհերի՝ ոչ դատական կարգով հատուցման ապահովման առնչությամբ:

ներառման համակողմանի քաղաքականություն որդեգրելու վերաբերյալ ECRI-ի հանձնարարականի վրա՝ Եվրոպայի խորհուրդը պատրաստ է աջակցել ՀՀ իշխանություններին՝ իրավաբանական փորձաքննություն տրամադրելով ներառման ազգային ռազմավարության մշակման համար, որը կերաշխավորի խոցելի խմբերի իրավունքները:

Սեռական կողմնորոշումն ու սեռային ինքնությունը (GOSI) Սահմանադրությամբ, Քրեական օրենսգրքով կամ խտրականության բացառման մասին օրենքի նախագծով միանշանակ պաշտպանվող հիմք չէ: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է օժանդակել ազգային իշխանություններին ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանության համակարգը՝ ECRI-ի 2016 թ. Հայաստանի մասին զեկույցում արված հանձնարարականներին համապատասխան զարգացնելու հարցում: Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում՝ որպես Եվրոպայի խորհրդի տեխնիկական աջակցության մաս կառաջարկվեն սեռական կողմնորոշման և սեռային ինքնության հիմքով խտրականությունը և հոմոֆոբ ու տրանսֆոբ ատելության խոսքն ու ատելության հողի վրա հանցագործությունները կանխարգելելու և հետապնդելու և ԼԳԲՏԻ անձանց հավասարությունը խթանելու գործողություններ:

- **Փոքրամասնություններ և փոքրամասնությունների լեզուներ**

Շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն (ՇԿԽԿ) Հայաստանի վերաբերյալ իր կարծիքում գովասանքի է արժանացրել Հայաստանի ջանքերը փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու և խթանելու ուղղությամբ[19], ինչի արդյունքներն են սահմանադրական փոփոխությունները, որոնք երաշխավորում են փոքրամասնությունների ներկայացվածությունն Ազգային Ժողովում, հանդուրժողականության մթնոլորտի պահպանումը և եզդի ու քուրդ երեխաների համար նախադպրոցական կրթության բարելավված հասանելիությունը: Բայցևայնպես, հետագա ջանքեր են անհրաժեշտ եզդի երեխաների, հատկապես, աղջիկների համար կրթության հասանելիությունը բարձրացնելու, բոլոր երեխաների նախադպրոցական կրթությունը ապահովելու և պարտադրված ամուսնությունները քրեականացնելու ուղղությամբ: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է սատարելու փոքրամասնությունների պաշտպանվածությունը բարձրացնելու Հայաստանի ջանքերին՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (FCNM) և Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակ 5.3-ին համապատասխան:

Նույն կերպ, ինչպես կարևորվել է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ECRML) կիրառության մասին չորրորդ գնահատման զեկույցում՝ պետք է խթանվի ասորերենի, հունարենի, քրդերենի և եզդիերենի օգտագործումը նախադպրոցական կրթության մեջ և պետք է այս լեզուների դասավանումն առաջարկվի նաև տարրական և հիմնական դպրոցներում: Հետագա ջանքեր պետք է գործադրվեն այս լեզուների պաշտպանությունն ու խթանումը զանգվածային լրատվամիջոցներում և հանրային կյանքում, ինչպես նաև վարչական ու դատական մարմիններում ընդլայնելու համար: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է սատարել Հայաստանին ECRML-ով ստանձնած այս հանձնառությունները կատարելու հարցում:

- **Երեխաների իրավունքներ**

Սեռական շահագործումից և սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանզարոտի կոնվենցիա) ՀՀ կառավարությունը ստորագրել է 2010 թվականին, սակայն դեռ չի վավերացրել: Կոնվենցիայի վավերացումն առաջնահերթություն է ինչպես ՀՀ իշխանությունների, այնպես էլ Եվրոպայի խորհրդի համար:

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) մասին սահմանադրական օրենքով (2016 թ.) այս կառույցին վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակն ընդլայնվել է և այժմ ներառում է

[19] ACFC/OP/IV(2016)006.

երեխաների խնամքի հաստատությունների մոնիթորինգը. դրական զարգացում է ՄԻՊ գրասենյակին լրացուցիչ գործառույթի վերապահումը՝ որպես երեխաների իրավունքների մոնիթորինգի միակ մեխանիզմ: Ի պատասխան ՄԻՊ-ի խնդրանքի՝ սույն գործողությունների ծրագիրը կօժանդակի այս լիազորություններն ու գործառույթները կատարելու և երեխաների հարցերով զբաղվելու ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդը կփորձի բարձրացնել առանցքային շահակիցների, մասնագետների ու քաղաքացիական հասարակության իրազեկությունը Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակ 16.2-ի (ՄԱԿ ԿԶՆ) և երեխաների նկատմամբ բռնությանը վերջ դնելու մյուս թիրախների իրագործման կարևորության մասին, որպեսզի հնարավոր լինի երաշխավորել երեխաների՝ առանց բռնության ապրելու իրավունքը և նրանց հնարավորություն ընձեռվի որպես իրավատեր օգտվել Կայուն զարգացման 2030 օրակարգի բոլոր տարրերից:

Հետևաբար, հիմք ընդունելով մոնիթորինգ իրականացնող միջազգային և եվրոպական մարմինների[20] համապատասխան հանձնարարականները և հաշվի առնելով Հայաստանում երեխայի իրավունքներին առնչվող իրավական դաշտն ու քաղաքականության շրջանակը՝ Եվրոպայի խորհուրդը պատրաստ է սատարել իշխանություններին երեխաների բարեկեցությունն ու պաշտպանության համակարգն ամրապնդելու իրենց գործողություններում՝ ցանկացած միջավայրում երեխաներին բռնությունից, ինչպես նաև սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից պաշտպանելու նպատակով, միաժամանակ քրեական հետաքննություններն իրականացնելով արդյունավետ և երեխաներին չվնասող կերպով ու ընդլայնելով խոցելի երեխաների պաշտպանվածությունը: Երեխաների տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների երաշխավորման համար ՀՀ իշխանություններին կտրամադրվի նպատակային աջակցություն:

- **Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության բնագավառում**

Առայսօր Հայաստանը չի ստորագրել և չի վավերացրել Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիան (Օվեդոյի կոնվենցիա): Հիվանդների իրավունքներին օժանդակելու Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) խնդրանքին ի պատասխան Եվրոպայի խորհուրդը, ապագայում Կոնվենցիայի վավերացման նպատակով, կբարձրացնի հայ հասարակության և գործադիր, օրենսդիր ու դատական իշխանությունների, ինչպես նաև առողջապահական ու իրավաբանական մասնագիտական հանրույթների իրազեկությունը կենսաբժշկության բնագավառում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների չափանիշների, մասնավորապես, Օվեդոյի կոնվենցիայի և դրա լրացուցիչ արձանագրությունների վերաբերյալ: ԵԽ-ն նաև կձգտի ավելի զարգացնել համապատասխան բժշկական և իրավաբանական ուսումնական հաստատությունների, այդ թվում ՄԻՊ-ի կարողությունները՝ Մարդու իրավունքների թեմայով իրավաբանների կրթության ինտերակտիվ, միջառարկայական եվրոպական ծրագրի (HELP) միջոցով. սա մի դասընթաց է, որը վերաբերում է կենսաբժշկության մեջ մարդու իրավունքների առանցքային սկզբունքներին և որը կհարմարեցվի Հայաստանի իրավաբանների և բժիշկների կարիքներին: Գործողությունների ծրագրով, որպես լրացում, օժանդակություն կտրամադրվի իշխանություններին՝ իրավական դաշտն ու կառավարումը Եվրոպայի խորհրդի կենսաբժշկության բնագավառի չափանիշներին համապատասխան բարելավելու գործում:

[20] Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը 2015 թ. մայիսի 12-ից 15-ը Հայաստան կատարած այցի արդյունքներով, Հայաստանի կողմից Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման մասին թիվ CP(2017)1 հանձնարարականը, որն ընդունվել է 2017 թ. մարտի 10-ին Կողմերի կոմիտեի 20-րդ նիստի ժամանակ: Լանզարոտեի կոմիտեի առաջին և երկրորդ իրականացման հաշվետվությունները վստահության շրջանակում սեռական բնույթի բռնությունների վերաբերյալ:

Ակնկալվող արդյունքներ

Գենդերային հավասարություն, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքար և արդարադատության հասանելիության բարելավում

- ✓ Հայաստանն ավելի պատրաստված է Ստամբուլի կոնվենցիայի վավերացմանը:
- ✓ Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ՀՀ իրավական դաշտն ու քաղաքականության շրջանակը համապատասխանում են Եվրոպայի խորհրդի չափանիշներին:
- ✓ Գենդերահեն բռնությունից և ընտանեկան բռնությունից տուժած կանանց, այդ թվում ամենաանապահովներին ավելի հասանելի են արդարադատությունն ու աջակցման ծառայությունները:

Հիմնական ազգային գործընկերները՝ ՀՀ արդարադատության նախարարություն (ԱՆ), Արդարադատության ակադեմիա, Ոստիկանություն, Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ), Փաստաբանների պալատ և հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ):

Խտրականության բացառում. ազգային փոքրամասնություններ, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ

- ✓ Քրեական և հարակից օրենսդրությունը համապատասխանեցված է բոլոր հիմքերով խտրականության կանխարգելման ու դրանից պաշտպանության եվրոպական չափանիշներին:
- ✓ Գործում են եվրոպական չափանիշներին, մասնավորապես, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) չափանիշներին համախատասխան խտրականության կանխարգելման և դրա դեմ պայքարի իրականացման համապատասխան անկախ հաստատություններ:
- ✓ Համապատասխան շահակիցներն իրենց կատարելագործված կարողությունները մոբիլիզացնում են ռասիստական, հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության խոսքի և բռնության կանխումը, այս երևույթի դեմ պայքարը և հրահրողների դատական կարգով հետապնդումը բարելավելու համար:
- ✓ Խոցելի խմբերի իրավունքներն ավելի լավ են երաշխավորված ներառման ազգային օրենսդրության ընդունման շնորհիվ:
- ✓ Նախադպրոցական կրթությունը բոլոր փոքրամասնությունների երեխաների, այդ թվում եզդի աղջիկների համար երաշխավորված է:
- ✓ Պարտադրված ամուսնությունը քրեականացված է:
- ✓ Տեղական իշխանությունները կիրառում են իրենց կատարելագործված գիտելիքներն ու հմտությունները տեղական ինքնակառավարման մարմիններում փոքրամասնությունների լեզուների օգտագործումը խթանելու նպատակով:

Հիմնական ազգային գործընկերները՝ ՀՀ կրթության և սպորտի նախարարություն, Մշակույթի նախարարություն և Ազգային փոքրամասնությունների ազգային ու մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդ, ՀՀ ԱՆ, Ոստիկանություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (ՄԻՊ գրասենյակ) և ՀԿ-ներ:

Երեխաների իրավունքներ

- ✓ Երեխաների պաշտպանության օրենսդրական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակները համապատասխանում են եվրոպական չափանիշներին, մասնավորապես, Լանզարոտի կոնվենցիային և Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիային:
- ✓ Պատկան մարմինները համակողմանի ռազմավարություններ են հաստատում և իրականացնում երեխաներին բռնության բոլոր ձևերից, այդ թվում մանկական թրաֆիքինգից պաշտպանելու և այդ երևույթները կանխարգելելու ուղղությամբ:
- ✓ Իշխանությունները, մասնագետներն ու ՄԻՊ գրասենյակներն իրենց կարողությունները մոբիլիզացնում են երեխաներին բռնության բոլոր ձևերից, այդ թվում մանկական թրաֆիքինգից

պաշտպանելու և այդ երևույթները կանխարգելելու, ինչպես նաև տուժած և վկա հանդիսացող երեխաներին աջակցություն տրամադրելու համար:

- ✓ ՄԻՊ գրասենյակի՝ երեխաների խնամքի հաստատությունների մոնիթորինգն իրականացնելու կարողությունները բարելավված են, իսկ երեխաների խնամքի այլընտրանքային ծառայություններն՝ ուժեղացված:

Հիմնական ազգային գործընկերները՝ ԱՆ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Կրթության և սպորտի նախարարություն, ՄԻՊ գրասենյակ, ՀԿ-ներ:

Մարդու իրավունքների պաշտպանություն կենսաբժշկության բնագավառում

- ✓ Համապատասխան իրավական փաստաթղթերն ու իրավապահ մարմինների աշխատակարգերը համապատասխանեցվել են Օվեդոյի կոնվենցիայով ամրագրված սկզբունքներին:
- ✓ Խրախուսվում են կենսաբժշկության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական մարտահրավերների շուրջ հանրային իրազեկումն ու հանրային քննարկումը:
- ✓ Կենսաբժշկության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր մակարդակը բարձրացել է:
- ✓ Հայաստանն ավելի պատրաստված է հետագայում Օվեդոյի կոնվենցիային հնարավոր անդամակցությանը:

Հիմնական ազգային գործընկերները՝ ՄԻՊ գրասենյակ, ՀՀ առողջապահության նախարարություն, ԱՆ, Կրթության և գիտության նախարարություն, Գլխավոր դատախազություն, Վճռաբեկ դատարան, Բիոէթիկայի ազգային կենտրոն, Արդարադատության ակադեմիա, Երևանի պետական բժշկական համալսարան, Երևանի պետական համալսարան, Փաստաբանների պալատ և ՀԿ-ներ:

2.1.3 Սոցիալական իրավունքների ապահովում

- ➢ **Հայաստանում սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքի ապահովում՝ Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային (վերանայված ԵՍԽ) համապատասխան**

Հայաստանը 2004 թվականին վավերացրել է վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (վերանայված ԵՍԽ)՝ ընդունելով դրա 98 կետերից 67-ը: Հայաստանը չի ընդունել կոլեկտիվ գանգատների ընթացակարգը: 2007-2017 թթ. իր եզրակացություններում Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն (ECSR) արձանագրել է ազգային իրավիճակների՝ Խարտիայի ընդունված դրույթներին անհամապատասխանության մի շարք դեպքեր: Ավելին, հարկ է բարելավել ազգային զեկույցները՝ Կոմիտեի կողմից իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու համար:

Հաշվի առնելով 2006 թվականից ի վեր ECSR-ի՝ անհապատասխանության մասին հաստատված եզրակացությունները, պետք է արագացնել ՀՀ օրենսդրության ու պրակտիկայի բարեփոխումը: Ըստ այդմ, Եվրոպայի խորհուրդը կօժանդակի ազգային իշխանություններին ազգային օրենսդրությունն ու կարգավորման դաշտն ու պրակտիկան՝ սոցիալական, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու գործում, ինչի պաշտպանությունն ու խթանումը որպես առաջնահերթ գործողություն ընդգծվել է կառավարության կողմից: Բացի այդ, սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքի մեծացման հարցում Հայաստանի հետ համագործակցության շրջանակներում պատկան մարմիններին օժանդակություն կտրամադրվի վերանայված ԵՍԽ-ի ընդունված դրույթների կիրառման վերաբերյալ ECSR-ին անհրաժեշտ տվյալների հավաքման ու տրամադրման գործում: ECSR-ի մոնիթորինգի գործընթացն, այսպիսով, կբարելավվի: Այնուհետև ուշադրության կենտրոնում կլինի կոլեկտիվ գանգատների մեխանիզմի և լրացուցիչ դրույթների ընդունման խրախուսումը:

Ակնկալվող արդյունքներ

Հայաստանում սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքի ապահովում՝ Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային (վերանայված ԵՍԽ) համապատասխան

- ✓ Օրենսդրությունն ու պրակտիկան համապատասխանեցված են եվրոպական չափանիշներին՝ այսպիսով բարելավելով վերանայված ԵՍԽ-ով երաշխավորված իրավունքների իրացումը:
- ✓ Հայաստանն ավելի պատրաստված է լրացուցիչ դրույթների և կոլեկտիվ գանգատների ընթացակարգի ընդունմանը:
- ✓ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին (ECSR) ներկայացվող ազգային զեկույցների որակը բարելավված է:
- ✓ Մարդու իրավունքների պաշտպանը նպաստում է Հայաստանում սոցիալական իրավունքների բավարար պաշտպանությանը:

Հիմնական ազգային գործընկերները՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և համապատասխան այլ նախարարություններ, Խորհրդարան, Աշխատանքի տեսչություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (ՄԻՊ գրասենյակ), տեղական և մարզային իշխանություններ, սոցիալական գործընկերներ և քաղաքացիական հասարակություն:

2.2 ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի խորհուրդը կշարունակի սատարել Հայաստանի ջանքերին՝ արդարադատության համակարգի (դատարաններ, դատախազություն, քրեակատարողական համակարգ և ոստիկաններ) հանդեպ վստահությունը բարձրացնելու, համապատասխան օրենսդրական ու ինստիտուցիոնալ դաշտն՝ եվրոպական չափորոշիչներին համաձայն բարելավելու, դատական համակարգի ֆունկցիոնալ անկախությանը և հաշվետվողականությանն առնչվող ներկայիս օրենսդրական ու նորմատիվ ակտերի կիրառումը դյուրացնելու և ազգային դատարանների դատական ակտերի, ինչպես նաև ՄԻԵԴ-ի վճիռների կատարման բարելավման ուղղությամբ: ԵԽ-ն նաև կաջակցի իշխանություններին քրեակատարողական համակարգի բարեփոխումը շարունակելու գործում, որի նպատակն է հասնել կալանավայրերում պահման ավելի ապահով և ավելի մարդկային պայմանների և կրկնահանցանքի կատարման ցուցանիշները նվազեցնելու միջոցով բարձրացնել հասարակական անվտանգությունը:
Կոռուպցիայի, փողերի լվացման և կիբեռհանցավորության դեմ համակարգված և հետևողական պայքարը կարևոր է: Նույն կերպ՝ հետագա ջանքեր են անհրաժեշտ հետևյալ բնագավառներում՝ լրատվամիջոցների ազատություն պաշտպանություն, լրագրողների անվտանգության բարելավում, հանրային տեղեկությունների հասանելիության բարելավում և անձնական տվյալների պաշտպանության ընդլայնում:

2.2.1 Արդարադատության ապահովում

- ➢ **Դատական իշխանության անկախություն և արդյունավետություն**

Փոփոխված Սահմանադրության շնորհիվ Հայաստանը նկատելի առաջընթաց է գրանցել դատական բարեփոխումների իրականացման մեջ, մասնավորապես, ընդունելով դատական իշխանությանը վերաբերող մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝ նոր Դատական օրենսգիրքը և նոր Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ինչպես նաև Դատական օրենսգրքից[21] բխող մի շարք այլ իրավական ակտեր, որոնց շնորհիվ դատաիրավական դաշտը մոտարկվել է եվրոպական չափանիշներին: Դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարությանը և դրանից բխող

[21] Նոր ընդունված օրենքներով մի շարք փոփոխություններ են կատարվել դատական համակարգում, այդ թվում, սակայն ոչ միայն, դատավորների ինքնակառավարման մարմինների աշխատանքի կառուցվածքում և շրջանակում, դատարանների կառավարման մեջ և հաշտարարի և արբիտրաժի ինստիտուտի ամրապնդման հարցում:

գործողությունների ծրագրի առաջնահերթություններին համապատասխան՝ Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել իշխանություններին դատական կարևոր բարեփոխումների իրականացման, այդ թվում՝ Դատական օրենսգրքի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի արդյունավետ կիրարկման գործում: Կազմակերպությունը նույն կերպ կշարունակի օժանդակել իրավական ակտերի մշակման գործընթացին:

Տրամադրվող այսօրինակ օժանդակությունը նպատակաուղղված է լինելու դատական իշխանության անկախության, անաչառության, արդյունավետության և հաշվետվողականության ամրապնդմանը: Դա ներառելու է իրավական դաշտի և, ըստ անհրաժեշտության, [22] պրակտիկայի բարելավում և աջակցություն դատավորների ինքնակառավարման մարմիններին, մասնավորապես, Բարձրագույն դատական խորհրդին (ԲԴԽ), որպեսզի վերջինիս ակտերն ու աշխատանքն ավելի համապատասխանեն թափանցիկության ու արդյունավետության ԵԽ չափորոշիչներին ու լավագույն գործելակերպին:[23] Ինչպես հաստատվել է կառավարության կողմից, Վեճերի այլընտրանքային լուծման (ՎԱԼ) միջոցների կիրառումն ապահովող իրավական ակտերն ընդունված են՝ հիմնականում շնորհիվ Եվրոպայի խորհրդի նախկին համագործակցային օժանդակության: Այդուհանդերձ, ՎԱԼ-ը դեռևս լայնորեն չի կիրառվում և, ըստ այդմ, թերևս արժեքավոր դեր չի ունեցել Հայաստանի դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու հարցում: Դատաիրավական բարեփոխումների իրականացմանը տրամադրվող օժանդակության շրջանակներում սույն գործողությունների ծրագրով, այսպիսով, կշարունակվի ՎԱԼ խթանումը՝ հաշտարարության և արբիտրաժի կիրառությունն ընդլայնելու միջոցով: Ըստ այդմ, այլ գործողությունների շարքում փորձ կարվի բարելավել ուսանողների, հաշտարարների և արբիտրների գիտելիքներն ու հմտությունները նոր իրավական ակտերի մասով և բարձրացնել ՎԱԼ-ի հավանական օգտատերերի իրազեկության աստիճանը:

Եվրոպայի խորհուրդը նաև փորձագիտական և տեխնիկական աջակցություն է տրամադրելու՝ ՀՀ նոր Սահմանադրության լույսի ներքո խորհրդարանական համակարգում Խորհրդարանի և դատական իշխանության հարաբերությունների հիմնական կողմերը քննարկելու գործում:

Առանց դատական իշխանության որակը բարելավելու հնարավոր չէ հասնել դատական իշխանության նկատմամբ ՀՀ քաղաքացիների հավատի և վստահության բարձրացման: Եվրոպայի խորհուրդն, ըստ այդմ, պատրաստ է իշխանություններին օգնել դատական ակտերի որակը բարելավելու գործում՝[24] այս կերպ ապահովելով իրավական որոշակիության սկզբունքը: ԵԽ-ն կարող է օժանդակություն տրամադրել էլեկտրոնային արդարադատության լուծումների ներդրման հարցում, եթե իշխանությունները նման ցանկություն արտահայտեն:

Կառավարության գերակայություններին համապատասխան՝ սույն գործողությունների ծրագիրը նույն կերպով կանդրադառնա բոլորի, այդ թվում՝ կանանց և խոցելի խմբերի՝ փոքրամասնություններ, երեխաներ ու երիտասարդներ, համար արդարադատության հավասար հասանելիությունը ամրապնդելու անհրաժեշտությանը՝ մասնավորապես վերացնելով տեխնիկական և օրենսդրական խոչընդոտները: Եվրոպայի խորհուրդն օժանդակություն կտրամադրի կին դատավորների մասնակցության ու առաջնորդության ամրապնդմանը՝ դատական համակարգում մեծացնելով կին դատավորների թիվը և կանանց համար ապահովելով արդարադատության հասանելիություն:
Դատական համակարգում առկա համակարգային հիմնախնդիրներին լուծում կտրվի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ

[22] Թեև Դատական օրենսգրքի ընդունումը նպաստել է դատական իշխանության անկախության, թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդմանը, Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողովը) այդուհանդերձ որոշ մտահոգություններ է արտահայտել «դատավորների վարքագիծն ու պարտականությունները» ավելի ճշգրիտ սահմանելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ԲԴԽ-ի որոշումները բողոքարկելու իրավունք ապահովելու վերաբերյալ:

[23] Այս աջակցությունը, այլ գործողությունների շարքում, ներառում է ԲԴԽ-ի կարողությունների զարգացում, ինչպես նաև փորձագիտական օժանդակության տրամադրում դատավորների գնահատմանն առնչվող համապատասխան փաստաթղթերի և կարգերի, դատական գործերի քննության ուղենիշային ժամկետների, համապատասխան SS և տեխնիկական գործիքների և նոր ընդունված Դատական օրենսգրքից բխող այլ փաստաթղթերի մշակման և փոփոխման գործընթացին:

[24] Գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտերի հիմնավորվածության և եզրակացությունների հստակության առումով:

հոդվածին առնչվող համապատասխան վճիռներով նախատեսված ընդհանուր միջոցների արդյունավետ կիրառմանն աջակցելու միջոցով:

Եվրոպայի խորհրդի՝ արդարադատության մատչելիությունն ապահովելու գործում իրավաբանների/փաստաբանների առանցքային դերն ընդգծող փաստաթղթերի[25] և Փաստաբանների պալատի առաջնահերթության[26] լույսի ներքո առաջարկվում է հնարավոր համագործակցությունը կառուցել մարզային մակարդակում՝ նպատակադրելով մարզերի իրավաբանների/փաստաբանների անկախության և արհեստավարժության բարձրացումը, իրավաբանների կողմից իրավաբանական ծառայությունների մատուցման բազմազանության ու ներառականության ապահովումը, ինչպես նաև Փաստաբանների պալատի գործունեության բարելավումը:

- **Բանտեր և ոստիկանություն**

Եվրոպայի խորհուրդը Հայաստանին օժանդակել է քրեակատարողական բարեփոխումների իրականացման ընթացքում՝ մասնավորապես բազմակողմ օժանդակություն տրամադրելով բանտարկյալներին բուժծառայությունների տրամադրման համակարգի բարելավմանը՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան: Եվրոպայի խորհուրդը շարունակելու է աջակցել իշխանություններին բանտային առողջապահական համակարգին առնչվող բարեփոխումների նպատակների իրագործման հարցում, որպեսզի ապահովվի նախկին համագործակցության արդյունքների կայունությունը և լուծում ստանան Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեի վերջին զեկույցում (CPT) ընդգծված թերությունները:[27] Այս թերություններն ընդգծվել են Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ)՝ «Քրեակատարողական հաստատություններում ազատազրկված անձանց առողջապահական իրավունքի երաշխավորման մասին» 2017 թ. ընթացիկ հանրային զեկույցում: Համագործակցության առաջնահերթություն է, ըստ այդմ, միջազգային չափանիշներին համապատասխան առողջապահական ծառայությունների տրամադրման կարգավորիչ և գործառնական շրջանակների հետագա համապատասխանեցումը:

Բացի այդ, այս գործողությունների ծրագրի հիմնական ուղղվածությունը նոր քրեակատարողական բժշկական կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների հետագա զարգացումն է, որի ստեղծումը կարևոր քայլ էր բանտային ղեկավարությունից բուժանձնակազմի մասնագիտական անկախությունն ապահովելու առումով: Բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների բարելավումը՝ նրանց աշխատանքը հանրային առողջապահության ոլորտի պահանջներին համապատասխան ապահովելու նպատակով, և քրեակատարողական հաստատություններում վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման ու դրանց դեմ պայքարի մեխանիզմների զարգացումը ևս Եվրոպայի խորհրդի հետագա ներգրավվածությունն են պահանջում:

2013 թվականից ի վեր Եվրոպայի խորհուրդը շարունակական տեխնիկական աջակցություն է տրամադրել Հայաստանին՝ ազատազրկում առաջացնող պատիժների կիրառումը նվազեցնելու և եվրոպական չափանիշներին համապատասխան պրոբացիայի ծառայություն ստեղծելու նպատակով: Զգալի արդյունքներ են ձեռք բերվել Եվրոպայի խորհրդի աջակցությամբ, այդ թվում 2016 թ. Պրոբացիայի մասին նոր օրենքի ընդունմամբ, ինչի արդյունքում 2016 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ստեղծվել և գործում է նոր Պրոբացիայի պետական ծառայությունը: Նորաստեղծ պրոբացիայի ծառայությունը լրացուցիչ օժանդակության կարիք ունի՝ իրավախախտների վերականգնումն ու վերաինտեգրումն ապահովելու, բանտերի գերբեռնվածության խնդիրը լուծելու և որպես կանխարգելման միջոց նախնական կալանքի կիրառումը նվազեցնելու նպատակով:

---

[25] Այդ թվում Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2121 (2018) հանձնարարականը, որտեղ ընդգծվում է դրանց կենտրոնական դերը արդարադատության իրականացման հարցում:

[26] Եվրոպայի խորհրդի հետ Պալատի համագործակցության առաջնահերթ ուղղություններից է Իրավաբանների և փաստաբանների վարքագծի կանոնագրքի արդիականացումն ու բարելավումը եվրոպական երկրների լավագույն փորձին համապատասխան, ինչը որոշվել է համակարգող խորհրդի ավարտական նիստի ընթացքում:

[27] (CPT/Inf(2016)31), այդ թվում բանտարկյալների համար նեղ մասնագիտական բուժօգնության ոչ բավարար հասանելիությունը, դեղերի պակասը, ինչի պարագայում դեղորայքը հիմնականում ապահովում են բանտարկյալների ընտանիքները, վարակիչ հիվանդ բանտարկյալների բուժումը, ընդունման պահին ոչ արդյունավետ բժշկական զննությունը, ներքին բողոքների պատշաճ ընթացակարգի բացակայությունը և մտավոր խնդիրների մասով բուժօգնության կարգի բացակայությունը:

Հիմնվելով պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի հանձնարարականների[28] և պրոբացիայի ծառայության և վերականգնողական արդարադատության[29] համակարգի արդյունավետությունը բարձրացնելու կառավարության վերահաստատված հանձնառության վրա՝ սույն գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել Արդարադատության նախարարությանը՝ պրոբացիայի կայացած ծառայություն ձևավորելու հարցում, որն ազգային մակարդակում իր գործունեությունը կիրականացնի եվրոպական չափանիշներին համապատասխան: Դա կիրագործվի ծառայության ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացման և անձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացման ու համապատասխան ենթաօրենսդրության, ինչպես նաև նոր աշխատանքային գործիքների մշակման միջոցով: Նաև ջանքեր կգործադրվեն հիմնական մասնագիտական խմբերի և հասարակության շրջանում պրոբացիայի մասին իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ:

Ոստիկանության բարեփոխման, այդ թվում, սակայն ոչ միայն, վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարի մասով օժանդակությունը՝ ազգային իշխանությունների հետ համատեղ նախանշվել է որպես սույն գործողությունների ծրագրով նախատեսվող համագործակցության ուղղություններից մեկը: Եվրոպայի խորհուրդն, ըստ այդմ, պատրաստ է աջակցել իշխանություններին ոստիկանության համակարգի բազմակողմ բարեփոխումների հարցում՝ նպատակադրելով բարձրացնել ոստիկանության հաշվետվողականությունն ու բարեվարքությունն ու ապահովել այս հաստատության օպերատիվ և արդյունավետ աշխատանքը:

Ակնկալվող արդյունքներ

Արդարադատության համակարգի անկախություն և արդյունավետություն

- ✓ Դատական համակարգի վերաբերյալ ազգային իրավական ակտերն ընդունված են և կիրառվում են Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան:
- ✓ Ինքնակարգավորվող դատական մարմինները, այդ թվում Բարձրագույն դատական խորհուրդը (ԲՏԽ) իրենց աշխատանքները կատարում են ավելի թափանցիկ ու արդյունավետ՝ եվրոպական չափանիշներին ու լավ աշխատակարգերին համապատասխան:
- ✓ Արդարադատության հավասար հասանելիությունը բարելավված է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների լավագույն փորձին համապատասխան:
- ✓ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ ընդունած վճիռներում սահմանված ընդհանուր միջոցներն արդյունավետ կիրառվում են:
- ✓ Արբիտրաժի և հաշտարարի ինստիտուտի լայնամասշտաբ կիրառությունն օգնում է կրճատել կուտակումները և ընդլայնել արդարադատության հասանելիությունը:
- ✓ Իրավաբաններն իրենց գործառույթները կատարում են անկախ ու պրոֆեսիոնալ եղանակով:

Հիմնական ազգային գործընկերները՝ Արդարադատության նախարարություն (ԱՆ), Բարձրագույն դատական խորհուրդ, Դատավորների ընդհանուր ժողով, Հայաստանի Հանրապետության դատավորների միություն, Հայաստանի հաշտարարների միություն, Հայաստանի արբիտրների միություն, Փաստաբանական դպրոց, Փաստաբանների պալատ և քաղաքացիական հասարակություն:

Բանտեր և ոստիկանություն

- ✓ Բուժօգնության տրամադրման կարգավորիչ և գործառնական շրջանակներն ընդունված են և կիրառվում են եվրոպական չափանիշներին համապատասխան:

[28] ՆԿ-ի թիվ(2010)1 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի պրոբացիայի կանոնների կիրառման վերաբերյալ, ՆԿ-ի թիվ (2017)3 հանձնարարականը Համայնքում սանկցիաների և միջոցների եվրոպական կանոնների վերաբերյալ:

[29] Ինչպես շարադրված է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի թարմացված նախագծում, որը դեռևս պետք է ընդունվի կառավարության կողմից:

- ✓ Բանտարկյալները, այդ թվում հաշմանդամություն ունեցողներն ու այլ խոցելի խմբերի անձինք բանտերում ապահովված են ավելի լավ պայմաններով և բուժօգնությամբ:
- ✓ Բանտային համակարգում բուժանձնակազմի անկախությունն ամրապնդված է:
- ✓ Ազգային մակարդակում գործում է կայացած պրոբացիայի ծառայություն, որը համապատասխանում է եվրոպական չափանիշներին:
- ✓ Պրոբացիայի ծառայության աշխատակազմը բարելավել է իր կարողությունները՝ իրականացնելու նոր պարտականություններ:
- ✓ Համապատասխան բարեփոխումների շնորհիվ ոստիկանությունը գործում է եվրոպական չափանիշներին համապատասխան:

Հիմնական ազգային գործընկերները՝ ԱՆ, Գլխավոր դատախազություն, Պրոբացիայի պետական ծառայություն, Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) և հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ):

2.2.2 Իրավունքի գերակայության ամրապնդում

- **Սահմանադրական արդարադատություն**

Շարունակելով նախորդ գործողությունների ծրագրի շրջանակներում ձևավորված կառուցողական համագործակցությունը՝ Եվրոպայի խորհուրդը պատրաստ է անհրաժեշտության դեպքում աջակցել Հայաստանի պատկան մարմիններին սահմանադրական արդարադատությանը վերաբերող եվրոպական չափանիշներին հետագա համապատասխանություն ապահովելու հարցում, այդ թվում՝ համապատասխան փորձագիտական աջակցություն և վերապատրաստումներ տրամադրելով ՀՀ սահմանադրական դատարանին:

- **Հայաստանում տվյալների պաշտպանության ամրապնդում**

2015 և 2016 թվականներին Եվրոպայի խորհուրդը ՀՀ իշխանություններին օգնել է վերանայել օրենսդրությունը և աջակցել է նորաստեղծ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը: 2017 թվականին, Լավ կառավարման գործընկերության շրջանակներում, ԵԽ-ն աջակցել է գործակալությանը Տվյալների պաշտպանության 2017-2021 թթ. ռազմավարությունը մշակելու գործում: Այդուհանդերձ, Անձնական տվյալների պաշտպանության գործակալության գործառույթներն ու գործառնական անկախությունը պետք է ընդլայնվի:

Եվրոպայի խորհուրդը պատրաստ է սատարելու օրենսդրական բարեփոխումներին՝ եվրոպական չափանիշներին (արդիականացված թիվ 108 Կոնվենցիային և GDPR-ին[30]) համապատասխանություն ապահովելու նպատակով՝ հիմնականում նախորդ ծրագրերի ընթացքում բացահայտված թերությունների առնչությամբ (անձնական տվյալների բազաների օգտագործումը լրատվամիջոցների կողմից, Տվյալների պաշտպանության մարմնի (ՏՊՄ) գործառնական և կանոնադրական անկախություն, անձնական տվյալների փոխանցում երրորդ երկրների): ԵԽ-ն նաև առաջարկում է օգնել ՀՀ իշխանություններին տարբեր ոլորտների մասնագիտացած դերակատարների կարողությունների զարգացման գործում, այդ թվում՝ էլեկտրոնային տվյալներ, առողջապահական տվյալներ, երեխաների տվյալներ և տեսահսկում: Անհատների պաշտպանության վերաբերյալ հանրային կրթությունն ու իրազեկության մակարդակի բարձրացումը՝ անձնական կյանքի իրավունքի և տվյալների պաշտպանության իրավունքի առնչությամբ, ևս պետք է լինի գործողությունների ծրագրի կենտրոնում: Առաջարկվող այս միջամտություններում հաշվի են առնված Տվյալների պաշտպանության կառույցի առաջնահերթությունները, որոնք սահմանված են Տվյալների պաշտպանության 2017-2021 թթ. ռազմավարությամբ: Այստեղ հաշվի են առնված նաև եվրոպական մակարդակում տեղ գտած վերջին զարգացումները, որոնք պահանջում են նաև Անձնական տվյալների

[30] Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգ:

ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության արդիականացված կոնվենցիային համադրելի՝ կայացած ազգային իրավական շրջանակներ:

- **Տեղեկատվական հասարակություն և համացանցի կառավարում. խոսքի ազատություն և հանրային հեռարձակում**

Հայաստանը մի շարք մարտահրավերների է առերեսվում խոսքի և լրատվամիջոցների ազատության բնագավառում: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը (Հանձնակատար) 2011 թվականի իր զեկույցում մի շարք թերություններ է արձանագրել լրատվական դաշտի բազմակարծության ու բազմազանության առնչությամբ: Դեռևս հետագա բարելավման կարիք ունեցող ուղղություններից են[31] նաև լրագրողների պաշտպանությունը, [32] լրագրողների նկատմամբ հանցանքների արդյունավետ կանխումն ու քննությունը, տեղեկատվության հասանելիությունը և ընտրությունների լուսաբանումը լրատվամիջոցներով:

Հիմնվելով Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության՝ տարածաշրջանային համատեղ ծրագրերի միջոցով գրանցած արդյունքների վրա[33] և ՀՀ իշխանությունների խնդրանքով՝ սույն գործողությունների ծրագրով ավելի հասցեական օժանդակություն կտրամադրվի տեղայնացված գործողությունների միջոցով՝ Հայաստանում խոսքի ազատությունը, լրատվամիջոցների ազատությունը և համացանցի կառավարումը Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան ամրապնդելու համար: Եվրոպայի խորհուրդն, ըստ այդմ, ՀՀ իշխանություններին կջակցի լրատվական դաշտի՝ եվրոպական չափանիշների վրա հիմնված օրենսդրական շրջանակի մշակման և դրա պատշաճ կիրառման գործում: Գործողությունների ծրագրով փորձ է արվում բարձրացնել ազգային օրենսդրության և լրատվական դաշտի կարգավորումների համապատասխանությունը եվրոպական չափանիշներին՝ հիմնականում հետևյալ ուղղություններով. հանրային հեռարձակում, լրատվական դաշտը կարգավորողների անկախություն, հանրային տեղեկատվության հասանելիություն, լրատվամիջոցների նկատմամբ սեփականության կենտրոնացում և թափանցիկություն, խոսքի ազատություն, այդ թվում՝ համացանցում: Սույն գործողությունների ծրագրով նաև փորձ է արվելու էլ ավելի զարգացնել լրագրողների պրոֆեսիոնալիզմը, պատասխանատվությունը և էթիկայի նորմերի պահպանումը, ինչպես նաև բարելավել լրագրողների պաշտպանության իրավական ու ինստիտուցիոնալ շրջանակը, այդ թվում՝ ընդլայնելով լրագրողների նկատմամբ հանցագործությունների արդյունավետ կանխման ու քննության գործառույթը: Սույն գործողությունների ծրագրում հատուկ ուշադրություն է հատկացվելու ընտրությունների ընթացքում լրատվամիջոցներին առնչվող իրավախախտումների մոնիթորինգի բարելավմանը, որը կիրականացվի ավելի արդյունավետ կարգավորիչ գործիքների մշակման միջոցով:

Համացանցի կառավարման մասով, ինչպես խնդրել են իշխանությունները, սույն գործողությունների ծրագիրը նախևառաջ կանդրադառնա նաև համացանցում մարդու իրավունքների, մտավոր սեփականության և երեխաների պաշտպանությանը և, երկրորդ, ցանցային չեզոքության սկզբունքի արդյունավետ կիրառմանը:

Ակնկալվող արդյունքներ

Սահմանադրական արդարադատություն

- ✓ Հայաստանի սահմանադրական արդարադատության համակարգը մոտարկվել է եվրոպական չափանիշներին:

[31] Ինչպես նշվել է միջազգային կազմակերպությունների (Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն) և ՀԿ-ների («Ֆրիդոմ Հաուս», Լրագրողներ առանց սահմանների, «Հյուման Ռայթս Վոթչ») զեկույցներում:

[32] Ինչի մասին վկայում են նաև Եվրոպայի խորհրդի Լրագրողների պաշտպանության և լրագրողների անվտանգության խթանման հարթակ ներկայացված ահազանգերը:

[33] «Լրատվամիջոցների ազատության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության խթանում Հարավային Կովկասում և Մոլդովայում» (2011-2013 թթ. գործողությունների ծրագիր), «Պրոֆեսիոնալ և պատասխանատու լրագրության խթանում ինքնակարգավորվող մարմինների տարածաշրջանային ցանցին աջակցության միջոցով»:

Հիմնական ազգային գործընկերները՝ Սահմանադրական դատարան

Տվյալների պաշտպանության ամրապնդում

- ✓ Տվյալների պաշտպանության մասին օրենսդրությունը կա և կիրառվում է եվրոպական ամենաթարմ չափանիշներին համապատասխան:
- ✓ Տվյալների պաշտպանության կառույցը (ՏՊԿ) մոբիլիզացնում է իր ընդլայնված կարողությունները՝ տվյալների պաշտպանության օրենսդրության կիրառումն ապահովելու ուղղությամբ:
- ✓ Մասնագիտացված «խաղացողները» մոբիլիզացնում են իրենց կարողությունները՝ տվյալների պաշտպանության օրենսդրությունը՝ մասնավորապես էլեկտրոնային, առողջապահական տվյալների, երեխաների տվյալների և տեսահսկման մասով, կիրարկելու համար:

Հիմնական ազգային գործընկերները՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Ոստիկանություն, Դատախազություն, Պետական անվտանգության գործակալություն և քաղաքացիական հասարակություն:

Տեղեկատվական հասարակություն և համացանցի կառավարում

- ✓ Ազգային օրենսդրությունը, լրատվական դաշտի կարգավորումներն ու պրակտիկան համապատասխանում են խոսքի ազատության, լրատվական դաշտի բազմակարծության ու բազմազանության, հանրային հեռարձակողի կենտրոնացվածության և սեփականատերերի մասով թափանցիկության, համացանցի կառավարման եվրոպական չափանիշներին:
- ✓ Լրագրողներն իրենց գործառույթներն իրականացնում են ավելի պրոֆեսիոնալ, պատասխանատու եղանակով, էթիկայի նորմերին համապատասխան, և անվտանգ միջավայրում:

Հիմնական ազգային գործընկերները՝ Արդարադատության նախարարություն (ԱՆ), Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ), մասնագիտացած մեդիա կազմակերպություններ, լրագրողների ինքնակարգավորվող կառույցներ, լրագրության համապետական ամբիոններ և քաղաքացիական հասարակություն:

2.2.3 Պայքար իրավունքի գերակայությանը սպառնացող գործոնների դեմ

- ➢ **Պայքար կոռուպցիայի և փողերի լվացման դեմ**

Լայն տարածում գտած կոռուպցիան շարունակում է հանդիսանալ նշանակալի մարտահրավերներից մեկը, որը ՀՀ իշխանությունների լիարժեք ուշադրությունն է պահանջում իրավունքի գերակայության վրա հիմնված պետության կայացման, հաստատությունների նկատմամբ քաղաքացիների վստահության ձևավորման և տնտեսական աճի համար կայուն հիմք ստեղծելու ճանապարհին: Կառավարությունը միանշանակ արտահայտել է կոռուպցիայի դեմ պայքարելու իր հանձնառությունն ու քաղաքական կամքը և դիմել է Եվրոպայի խորհրդին՝ կոռուպցիայի տարածվածության դեմ ուղղված իր ջանքերին օժանդակելու խնդրանքով: Կառավարությունն այսպիսով խնդրել է օժանդակել ունիվերսալ հակակոռուպցիոն մարմնի ստեղծմանը, որը կմեկտեղի կանխարգելիչ և պատժիչ գործառույթները: Հակակոռուպցիոն նոր հաստատությունը կլիազորվի իրականացնելու նոր հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա գործողությունների ծրագիրը՝ կանխարգելիչ միջոցները ուժեղացնելու, պետական-մասնավոր գործընկերությունը խրախուսելու և կոռուպցիայի նվազեցման նպատակով էլեկտրոնային կառավարման ու էլեկտրոնային ուսուցման հարթակները լայնորեն օգտագործելու, կոռուպցիոն դեպքերի արդյունավետ քննություն, դատական կարգով հետապնդում ու որոշումներ կայացնելու ուղղությամբ:

Ընթացիկ և նախատեսված բարեփոխումների համատեքստում Եվրոպայի խորհուրդը պատրաստ է երկկողմ համագործակցության[34] միջոցով տեխնիկական աջակցություն տրամադրել ազգային իշխանություններին՝ լավ կառավարումն ամրապնդելու և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Դա կապահովվի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) և Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող կոմիտեի (MONEYVAL) հանձնարարականների կատարումն ու համապատասխան գործող միջազգային չափանիշների կիրառումն ապահովելու միջոցով: Եվրոպայի խորհուրդն այսպիսով կաջակցի իշխանություններին կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական, ինստիտուցիոնալ և քաղաքականության շրջանակներն ամրապնդելու գործում, այդ թվում՝ օժանդակելով իշխանություններին նոր Հակակոռուպցիոն ռազմավարության և համապատասխան գործողությունների ծրագրի սահմանման և իրագործման աշխատանքներում: Կշեշտադրվի նաև հանրային ծառայության ոլորտում բարեվարքության համակարգերի զարգացումը, այդ թվում՝ գույքի հայտարարագրման և շահերի բախման համակարգերի ամրապնդում, անդրադարձ ապօրինի հարստացմանը և ազգային մարմինների՝ գույքը վերադարձնելու և կոռուպցիայի դեպքերը կանխելու, քննելու ու դատական կարգով հետապնդելու կարողությունների ամրապնդում:

- **Կիբեռհանցավորություն**

Հիմնվելով նախորդ տարածաշրջանային համագործակցության արդյունքների վրա՝ սույն գործողությունների ծրագրի միջոցով Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել ՀՀ իշխանություններին Կիբեռհանցավորության դեմ կոնվենցիային (Բուդապեշտի կոնվենցիա) հետագա համապատասխանություն[35] ապահովելու գործում՝ անդրադառնալով ներպետական իրավական դաշտում առկա բացերին: Կիբեռհանցավորության և էլեկտրոնային ապացույցների առումով կարևոր դատավարական լիազորությունները դեռևս լիարժեք չեն կիրառվում քրեական դատավարության մասին օրենսդրության շրջանակներում, քանի որ Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունները դեռևս ընդունված չեն: Հատուկ շեշտադրվելու է կիբեռհանցավորության դեմ պայքարի ազգային ռազմավարության և համապատասխան գործողությունների ծրագրի մշակման գործում իշխանություններին օժանդակելը: Ուշադրություն է դարձվելու նաև կիբեռհանցավորության մասնագիտացված ստորաբաժանման լիարժեք կայացման հարցին, որպեսզի վերջինս գործի ինչպես ներպետական քննությունների, այնպես էլ միջազգային համագործակցության դաշտում, արդյունավետ կերպով գործակցի ինտերնետային ծառայություններ տրամադրող ազգային և միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև ուշադրություն է դարձվելու քրեադատավարական հաստատությունների կարողությունների ավելացմանն ընդհանրապես, որպեսզի վերջիններս զբաղվեն կիբեռհանցավորությամբ և էլեկտրոնային ապացույցներով:

Ակնկալվող արդյունքներ
Կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքար

- ✓ Առկա է կոռուպցիայի դեմ՝ անկախ ու արդյունավետ հակակոռուպցիոն մարմինների միջոցով պայքարի օրենսդրական, քաղաքականության և ինստիտուցիոնալ դաշտ:
- ✓ Առկա են և գործում են բոլոր մակարդակների պետական պաշտոնյաների գույքի ու շահերի հայտարարագրման կատարելագործված համակարգեր:
- ✓ Արձանագրված է կոռուպցիոն հանցագործությունների և իրավախախտումների քննության, դատական կարգով հետապնդման և դատապարտման արդյունավետության բարձրացում:

[34] Նախորդ գործողությունների ծրագրի շրջանակներում Հայաստանն օգտվել է տարածաշրջանային համագործակցությունից: .

[35] Նախորդ գործողությունների ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհուրդն աջակցել է Արդարադատության նախարարությանը (ԱՆ), վերջինիս խնդրանքով, Քրեական հարցերում միջազգային համագործակցության մասին օրենքի նախագիծը վերանայելու գործում, և իշխանություններին իրավական փորձագիտական եզրակացություն ու դրանից բխող հանձնարարականներ է ներկայացրել Քրեական դատավարության օրենսգրքի՝ կիբեռհանցավորության ու էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ դատավարական իրավունքներին առնչվող նոր դրույթների վերաբերյալ:

- ✓ Առկա են և կիրառվում են գույքի վերադարձի կատարելագործված ինստիտուցիոնալ մեխանիզմներ:
- ✓ Ներդրված են փողերի լվացման/ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ու բացահայտման գործուն մեխանիզմներ:

Հիմնական ազգային գործընկերները՝ Արդարադատության նախարարություն (ԱՆ), Գլխավոր դատախազություն, Բարձրաստիճան պետական պաշտոնյաների էթիկայի հանձնաժողով, Քաղաքացիական ծառայության խորհուրդ, Հատուկ քննչական ծառայություն, Հայաստանի քննչական կոմիտե, քաղաքացիական հասարակություն, Կրթության և գիտության նախարարություն, բարձրագույն ուսումնական հաստատություններ, կրթական կազմակերպություններ:

Կիբեռհանցավորություն

- ✓ Կիբեռհանցավորության մասին ազգային օրենսդրությունը և նյութաիրավական ու դատավարական նորմերը համապատասխանում են Բուդապեշտի կոնվենցիային:
- ✓ Հաստատված են կիբեռհանցավորության դեմ քրեական արդարադատության համակարգի արձագանքման և էլեկտրոնային ապացույցների մասին ազգային ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը:
- ✓ Կիբեռհանցավորության ստորաբաժանումն ու քրեական արդարադատության համակարգի հաստատություններն իրենց կարողությունները մոբիլիզացնում են կիբեռհանցավորության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը և էլեկտրոնային ապացույցների հասանելիությունը բարելավելու ուղղությամբ՝ ներպետական քննությունների ընթացքում և միջազգային համագործակցության միջոցով:
- ✓ Կիբեռհանցավորության դեպքերի քննության ընթացքում միջգերատեսչական համագործակությունն ու տվյալների փոխանակման գործընթացը բարելավված է:
- ✓ Ինտերնետային ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ համագործակցելու մշակույթը բարելավված է՝ համագործակցության իրավական հենքի միջոցով (որի կենտրոնում դատավարական լիազորություններն ու երաշխիքներն են փոփոխված/ընդլայնված համաձայնագրերը):

Հիմնական ազգային գործընկերները՝ ԱՆ, Ոստիկանություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե, ներպետական հաղորդակցությունը կարգավորող մարմիններ, անձնական տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմիններ, ինտերնետային ծառայություններ տրամադրող կազմակերպություններ (այդ թվում՝ միջազգային) և ոլորտային միություններ:

2.3 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրական գործընթացի նկատմամբ հավատի ձևավորումն ու ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ վստահության բարձրացմանն օգնելը շարունակում են գերակայել սույն գործողությունների ծրագրում: Այս հարցը հատկապես կարևոր է Հայաստանում տեղ գտած վերջին քաղաքական զարգացումների ֆոնին: Այդ համատեքստում Եվրոպայի խորհուրդը կաջակցի ՀՀ իշխանություններին ընտրական բարեփոխումների հարցում, որպեսզի արդար ընտրություններին խանգարող թերությունները վերացվեն: ԵԽ-ն նաև կօժանդակի ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու մարմինների և ներպետական դիտորդների արհեստավարժությունը և բարձրացնել ընտրական ու քաղաքական գործընթացներում կանանց, երիտասարդների և առաջին անգամ ընտրողների մասնակցությունը: Կազմակերպությունը կշարունակի օժանդակել Հայաստանին վարչատարածքային բարեփոխումների և ապակենտրոնացման օրակարգի իրագործման հարցում: Այդ նպատակով ԵԽ-ն կաջակցի նպաստավոր օրենսդրության ընդունմանը և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանը, որպեսզի վերջիններս կատարեն իրենց վրա դրված նոր գործառույթները: ԵԽ-ն, նույն կերպ, կխթանի կանոնավոր և արդյունավետ երկխոսություն տեղական իշխանությունների, նրանց ասոցիացիաների և ազգային իշխանությունների միջև՝ ապակենտրոնացումը խթանելու նպատակով:

Սույն գործողությունների ծրագրի կարևոր ուղղություններից է լինելու տեղական ժողովրդավարության որակի բարելավումը՝ կոռուպցիայի դեմ պայքարի և քաղաքացիների, այդ թվում՝ երիտասարդների մասնակցության խթանման գործողությունների, ինչպես նաև էթիկայի ու բարեվարքության նորմերին համախատասխան, թափանցիկ, հաշվետու և մասնակցային տեղական ինքնակառավարում զարգացնելու միջոցով: Նաև ջանք է գործադրվելու ազգային և տեղական մակարդակում արժեքահեն երիտասարդական քաղաքականությունների մշակման գործում երիտասարդների մասնակցությունն ու երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը բարձրացնելու ուղղությամբ՝ ձևավորելով ժողովրդավարական, թափանցիկ, ռոտացիոն սկզբունքով գործող, արդյունավետ խորհրդատվական կամ ներկայացուցչական երիտասարդական մարմիններ:

2.3.1 Ժողովրդավարական կառավարման ամրապնդում և նորարարության խրախուսում

- **Ընտրություններ**

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության/ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) երկու համատեղ կարծիքների համաձայն փոփոխված Ընտրական օրենսգիրքը, որն ընդունվել է 2016 թվականին և գնահատվել Վենետիկի հանձնաժողովի կողմից, նշանակալի բարելավում է ներմուծում ընտրությունների իրավական և ինստիտուցիոնալ դաշտում: Այնուամենայնիվ, չնայած դրական զարգացումներին՝ ընտրությունների մշտադիտարկման զեկույցների (Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի/ԵԽԽՎ[36] և ԵԱՀԿ/ՄԺԻԳ-ի 2017 թ. խորհրդարանական ընտրությունների մասին զեկույցներ) և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես)՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների լրացուցիչ ընտրությունների վերաբերյալ թիվ CPL31(2016)02)[37] տեղեկատվական զեկույցի եզրահանգումներում ու հանձնարարականներում ընդգծվել են կրկնվող թերացումներ, այդ թվում՝ վարչական ռեսուրսի չարաշահում, բողոքների դատական կարգով լուծման համակարգի արդյունավետության նկատմամբ վստահության բացակայություն, ընտրակաշառքների մասին համատարած բողոքներ և անհավասար պայմաններ լրատվական դաշտում: Այդ պատճառով լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահությունը ձևավորելու ուղղությամբ՝ մեծացնելով գործընթացի անկաշառությունը և այսպիսով նպաստելով Հայաստանի ընտրովի մարմինների լեգիտիմությանը և երկրի ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ հավատի ձևավորմանը:

Անդրադառնալով պետության հայտարարված գերակայություններից մեկին՝ Եվրոպայի խորհուրդը, երկրի ժողովրդավարական բարեփոխումներին աջակցելու համատեքստում, կաջակցի ՀՀ կառավարությանն ընտրական օրենսդրությունն ու պրակտիկան եվրոպական ընտրական ժառանգության չափանիշներին և սկզբունքներին մոտարկելու գործում: Հիմք ընդունելով նախորդ հանձնարարականները՝ հատուկ ուշադրություն է դարձվելու նաև ընտրական գործընթացի արդարության, թափանցիկության, ներառականության, հաշվետվողականության և հասանելիության բարձրացմանը: Այդ նպատակով սույն գործողությունների ծրագրով առաջարկվում է, այլ խնդիրների շարքում, անդրադառնալ նաև քաղաքական կուսակցությունների և ընտրական քարոզարշավների ֆինանսավորման թափանցիկությունը բարելավելու, կուսակցություններում գենդերային հավասարությունը խթանելու և ընտրական գործընթացներում կանանց՝ թե՛ որպես ընտրող և թե՛ որպես թեկնածու, երիտասարդների, առաջին անգամ ընտրողների և անապահով խմբերի մասնակցության հետագա ընդլայնման անհրաժեշտությանը: ԵԽ-ն նաև կստարի ընտրությունների արդյունավետ և արագ բողոքարկման իրավունքի երաշխավորմանն ու վարչական ռեսուրսի չարաշահման ու ընտրակաշառքների պրակտիկայի[38] նվազեցմանն ուղղված ազգային ջանքերը, ինչը թուլացնում է

[36] Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց | փաստաթուղթ թիվ 14325 | 2017 թ. մայիսի 29, Հայաստանի խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելություն (2017 թ. ապրիլի 2): http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-DocDetails-EN.asp?FileID=23748&lang=EN

[37] https://rm.coe.int/1680718fbc

[38] ՀՀ կառավարությունը հրապարակել է Քրեական օրենսգրքի նոր նախագիծ, որով քրեականացվում է ընտրակաշառք տալն ու ստանալը:

հանրության վստահությունն ընտրական գործընթացի նկատմամբ՝ որպես ներկայացուցչական և, այդպիսով, օրինական իշխանությունների ձևավորման հուսալի գործիք:

Ըստ այդմ, սույն գործողությունների ծրագրի շրջանակներում կամրապնդվեն համապատասխան շահակիցների, այդ թվում՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման պատասխանատու կառույցների, դատավորների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ ընտրական օրենսդրությունը կիրարկելու կարողությունները:

Շարունակելով զարգացնել նախորդ համագործակցության արդյունքները՝ սույն գործողությունների ծրագրի ուշադրության կենտրոնում կարող է լինել նաև ընտրությունների կազմակերպման ու անցկացման պատասխանատու կառույցների անկողմնակալության, թափանցիկության և արհեստավարժության մակարդակի բարձրացումը, ողջ երկրում տեղական դիտորդների՝ ընտրություններին հետևելու և հաշվետվություններ տալու կարողությունների զարգացումը և լրատվամիջոցներով հավասարակշռված լուսաբանման հասնելը՝ որպես վստահարժան ընտրությունների նախապայման: Այդ առնչությամբ ընտրությունների թեմայով շարունակական վերապատրաստման կենտրոնի ստեղծումը, թերևս, կնպաստի ընտրությունների կազմակերպման և անցկացման պատասխանատու կառույցների կարողությունների զարգացմանը:

- **Տեղական ժողովրդավարություն**

2015 թ. փոփոխված Սահմանադրության ընդունումից հետո Եվրոպայի խորհրդի աջակցությամբ նշանակալի առաջընթաց է գրանցվել տեղական ժողովրդավարության ոլորտում, այդ թվում՝ կատարվել են եվրոպական չափանիշներին ու աշխատակարգերին համապատասխան օրենսդրական բարեփոխումներ, որոնց շնորհիվ լավ կառավարման սկզբունքների հիման վրա բարելավվել են տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները: 2015 թ. սկսվել են համայնքների խոշորացմանն ուղղված տարածքային կառավարման լայնամասշտաբ բարեփոխումները, և մինչև 2019 թ. ավարտը նախատեսվում է ընդգրկել ողջ երկիրը:

Եվրոպայի խորհուրդը կշարունակի աջակցել Հայաստանին՝ տարածքային կառավարման ընթացիկ բարեփոխումների և լիզարությունների ապակենտրոնացման Կառավարության ճանապարհային քարտեզի[39] իրականացմանը՝ հաշվի առնելով Տարածքային կառավարման և զարգացման նախարարության գերակայությունները և Հայաստանի միջազգային հանձնառությունները, որոնցից են Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 16-րդ, 11-րդ և 15-րդ նպատակները: Ըստ այդմ, սույն գործողությունների ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի պետական կառավարման մարմիններին, մասնավորապես Տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը՝ ապահովելու ապակենտրոնացման ճանապարհային քարտեզի և դրա իրագործումն ապահովող, ինչպես նաև արդյունավետ ու արդյունավոր տեղական ինքնակառավարման մարմինների կայացմանը նպաստող համապատասխան օրենսդրության ընդունումը:[40] Աջակցություն կտրամադրվի նաև տեղական մակարդակում քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների, մասնավորապես կանանց և խոցելի խմբերի ակտիվ մասնակցության խթանմանն ուղղված քաղաքականությունների իրականացումն ապահովելու մասով: Հատուկ ուշադրություն է դարձվելու նաև տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանը, որպեսզի վերջիններս կարողանան իրականացնել իրենց փոխանցված լիազորությունները, և կառավարման բոլոր մակարդակներում լավ կառավարման սկզբունքների տարածմանն ու դրանց վերաբերյալ իրազեկության բարձրացմանը՝ այս կերպ նպաստելով տեղական ժողովրդավարության կայացմանն ու համայնքային ծառայությունների բարելավմանը:

2018 թ. հունիսին Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը վերահաստատեց իր հանձնառությունը Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (Կոնգրես)

[39] Հաստատվել է 2016 թվականին:

[40] Այդ թվում միջհամայնքային ընդլայնված համագործակցության, համայնքային ֆինանսների և մարդկային ռեսուրսների կառավարման ամրապնդված կարողությունների միջոցով:

Հայաստանում տեղական ժողովրդավարության վերաբերյալ թիվ 351 (2014)[41] հանձնարարականի իրականացման ճանապարհային քարտեզի (ստորագրված 2016 թ. հունիսին) կատարմանը՝ այսպիսով հաստատելով պատրաստակամությունը շարունակելու ապակենտրոնացման գործընթացը և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրառման հարցում Կոնգրեսի հետ համագործակցությունը: Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում Կոնգրեսը կշարունակի սատարել իրական ապակենտրոնացման գործընթացին՝ տեղական իշխանությունների, նրանց ասոցիացիաների և ազգային իշխանությունների միջև կանոնավոր և արդյունավետ երկխոսության խթանման միջոցով: Այդ նպատակով այն կշարունակի զարգացնել Հայաստանի համայնքների միության (ՀՀՄ) ինստիտուցիոնալ կարողությունները՝ որպես տեղական ինքնակառավարման համակարգի կարևոր շահագրգիռ կողմ՝ ամրապնդելու իր անդամ համայնքների շահերի պաշտպանի ՀՀՄ-ի գործառույթը և, խրախուսելու կենտրոնական ու տեղական իշխանությունների միջև կանոնավոր խորհրդակցությունների մեխանիզմի ներդրումը:

Նախորդ տարիների համագործակցության ձեռքբերումների[42] հիման վրա՝ Կոնգրեսը և Եվրոպայի խորհրդի Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնը (Կենտրոն) կշարունակեն նաև տեղական ժողովրդավարության որակի բարձրացմանն ուղղված աջակցությունը՝ ավելի զարգացնելով տեղական իշխանությունների և ընտրված ներկայացուցիչների հմտությունները՝ որպես փոփոխությունների պատասխանատուներ, և բարելավելով տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկությունը, հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը՝ որոշումների կայացման գործընթացում քաղաքացիներին ներգրավելու և նրանց մասնակցությունն ապահովելու միջոցով: Անդրադառնալով կառավարության հակակոռուպցիոն օրակարգին՝ աշխատանքներ կտարվեն նաև տեղական ընտրված ներկայացուցիչների հետ՝ էթիկայի և բարեվարքության նորմերին համապատասխան կառավարման նրանց կարողություններն ամրապնդելու նպատակով մասնավորապես 1999 թ. ընդունված Տեղական և տարածքային կառավարման մարմիններում ընտրված ներկայացուցիչների վարքագծի կանոնակարգի վերանայումից հետո՝ 2018 թ. նոյեմբերին ընդունված Տեղական մակարդակում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ Կոնգրեսի հանձնարարականի արդյունավետ իրականացման միջոցով:

Ակնկալվող արդյունքներ

Ընտրություններ

- ✓ Ընտրական օրենսդրությունն ու պրակտիկան համապատասխանում են եվրոպական չափանիշներին՝ այսպիսով բարձրացնելով հանրության վստահությունն ընտրական գործընթացի նկատմամբ:

Հիմնական ազգային գործընկերները՝ Արդարադատության նախարարություն (ԱՆ), Ազգային ժողով, Վարչապետին կից ընտրական օրենսդրության հարցերով հանձնաժողով, Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Տեղական ժողովրդավարություն

- ✓ Տեղական ժողովրդավարության և ֆինանսական համահարթեցման օրենսդրական ու ինստիտուցիոնալ դաշտը համապատասխանում է եվրոպական չափանիշներին:
- ✓ Տեղական իշխանությունները օգտագործում են իրենց հզորացված կարողությունները՝ քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիների մասնակցության ռազմավարություններ ընդունելու և իրագործելու համար:
- ✓ Պետական կառավարման մարմինները պատշաճ կերպով խորհրդակցում են տեղական իշխանությունների հետ՝ վերջիններիս ազգային ասոցիացիաների միջոցով, նրանց անմիջականորեն առնչվող հարցերի շուրջ:

[41] https://rm.coe.int/09000016807199f8

[42] «Տեղական ժողովրդավարության կայացումը Հայաստանում», «Տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ դաշտի ամրապնդում», և «Ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի համայնքների միությանը»:

- ✓ Տեղական իշխանությունները թափանցիկ են, հաշվետու և գործում են էթիկայի ու բարեվարքության նորմերին համապատասխան և իրականացնում են բաց կառավարում ու ապահովում որոշումների կայացման գործընթացի նկատմամբ քաղաքացիների վերահսկողությունը:

Հիմնական ազգային գործընկերները՝ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Արդարադատության նախարարություն, Ազգային ժողով, Հայաստանի համայնքների միություն (ՀՀՄ) և տեղական ինքնակառավարման մարմիններ:

2.3.2 Մասնակցության և բազմազանության խթանում

- **Կրթություն հանուն ժողովրդավարության**

Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բարեվարքության ամրապնդումն ու կոռուպցիայի դեմ պայքարը շարունակում են գերակայել սույն գործողությունների ծրագրում՝ համախմբելով այս ոլորտում Եվրոպայի խորհրդի նախորդ համագործակցության արդյունքները: Այսպիսով Եվրոպայի խորհուրդը շարունակելու է օժանդակել Կրթության և գիտության նախարարության՝ որակյալ բարձրագույն կրթության համակարգ ձևավորելու և ազգային մակարդակում ակադեմիական բարեվարքությունը խթանելու ջանքերին՝ կարևոր պետական բուհերում բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության գործուն մեխանիզմներ ներդնելու միջոցով, որոնք կհամապատասխանեն եվրոպական չափանիշներին: Հատուկ ուշադրություն է դարձվելու գրագողության կանխման պրակտիկ գործիքների մշակմանը:

Սույն գործողությունների ծրագրում ՀՀ իշխանությունների առաջարկությամբ ընդգրկված համագործակցության մյուս ուղղություններից են ակադեմիական ազատության ապահովումն ու կրթության նկատմամբ իրապես ուսանողակենտրոն մոտեցման ձևավորումը, ինչը կնպաստի որակյալ կրթությանը: Բացի այդ, կրթության ոլորտի առջև ծառացած ներկայիս մարտահրավերներից որոշներին լուծում տալու համար Կրթության և գիտության նախարարությունը նախատեսում է կրկին կազմել կրթության մասին համապատասխան օրենքի նախագիծ, որը լուրջ նորմատիվ իրավական դաշտ կսահմանի հետագա բարեփոխումների համար: Եվրոպայի խորհուրդը պատրաստ է անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն տրամադրել այդ նպատակով:

- **Երիտասարդները հանուն ժողովրդավարության**

Եվրոպայի խորհուրդը նախատեսում է աջակցել Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան և գենդերային գործոնների հաշվառմամբ երիտասարդական պետական քաղաքականության մշակման ու իրականացման գործում: Սույն գործողությունների ծրագիրն, այսպիսով, ներառելու է երիտասարդներին վերաբերող ուղղություն, որը կոնկրետ ուղղված է լինելու երիտասարդների մասնակցության և երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանն արժեքահեն երիտասարդական քաղաքականության մշակման գործում՝ միաժամանակ ամրապնդելով մարդու իրավունքներն ու ժողովրդավարական մասնակցությունը: Սույն գործողությունների ծրագրով, նույն տրամաբանությամբ, հատուկ ուշադրություն է դարձվելու համապետական և տեղական մակարդակում գենդերային իրավահավասարության տիրույթում երիտասարդների իրավունքների ապահովմանը: Ժողովրդավարական, թափանցիկ, ռոտացիոն սկզբունքով գործող երիտասարդական խորհրդատվական կամ ներկայացուցչական մարմինների ստեղծումը շատ կարևոր է լինելու երիտասարդների այդ իրավունքների ապահովման առումով: Բացի այդ, հատուկ ուշադրություն է դարձվելու գյուղական շրջանների երիտասարդներին և նրանց մարդկային կապիտալի զորացմանը: Կազմակերպությունը նաև կօժանդակի երիտասարդական քաղաքականության բնագավառին նպաստող միջոցառումներին՝ հիմնվելով Եվրոպայի խորհրդի ներկայիս չափանիշների և հանձնարարականների վրա: Գործողությունների ծրագրի մեկ այլ բաղադրիչ նպատակաուղղված է լինելու երիտասարդների, մասնավորապես երիտասարդ աշխատողների և երիտասարդական կազմակերպությունների առաջնորդների հետ աշխատող շահակիցների կարողությունների ձևավորմանը: Այդ առնչությամբ Եվրոպայի խորհուրդը ձգտելու է զարգացնել երիտասարդների հետ մարդու իրավունքների կրթության ոլորտի դասընթացավարների և արժեքները տարածողների կարողությունները՝

նպատակադրելով աջակցել «Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների» խարտիայի (EDC/HRE) կիրառմանը:

Հայաստանի երիտասարդության ներկայացուցիչները կշարունակեն պարբերաբար մասնակցել Եվրոպայի խորհրդի Հյուսիս-հարավ կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, որոնք խրախուսում են ներքևից վերև երկխոսությունը քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական կառավարման համակարգի մյուս դերակատարների միջև՝ խթանելով հյուսիս-հարավ երկխոսությունը երեք գերակա ոլորտների շուրջ՝ գլոբալ զարգացման հարցերով կրթություն, երիտասարդների համագործակցություն և կանանց զորացում:

Ակնկալվող արդյունքներ

Կրթություն հանուն ժողովրդավարության

- ✓ Բարձրագույն կրթության ոլորտում բարեվարքության ապահովման ու կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակը կատարելագործված է և արդյունավետ գործում է:
- ✓ Բարձրագույն կրթության ոլորտի հիմնական շահակիցները ճանաչում են կոռուպցիոն ռիսկերը և առաջ են տանում բարեվարքությունը խթանող գործողություններ:

Երիտասարդները հանուն ժողովրդավարության

- ✓ Երիտասարդներին, հատկապես, գյուղական շրջանների երիտասարդներին առնչվող ազգային և տեղական քաղաքականություններն ու աշխատակարգերը համապատասխանեցված են եվրոպական չափանիշներին և լավագույն աշխատակարգերին, այդ թվում՝ գենդերային հավասարության մասով:
- ✓ Երիտասարդները մարդու իրավունքների և ժողովրդավարական քաղաքացիության թեմայով կրթություն ու փորձ են ձեռք բերում երիտասարդական կազմակերպություններում և երիտասարդական գործունեության շրջանակներում:

Հիմնական ազգային գործընկերները՝ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, երիտասարդական հասարակական կազմակերպություններ:

ՄԱՍ III. ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

3.1 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող տեխնիկական համագործակցության ծրագրերի ընդհանուր համակարգումը Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակի (ODGP) իրավասության դաշտում է, որը համակարգում է համագործակցային միջոցառումների ծրագրման ու ֆինանսական միջոցների հայթայթման գործընթացը՝ միաժամանակ ապահովելով Եվրոպայի խորհրդի գրասենյակների լավ աշխատանքը տեղում: Գործողությունների ծրագրերն իրականացվում են Եվրոպայի խորհրդի կառավարման գլխավոր մարմնի կողմից, որը պատասխատանու է փորձագիտական համապատասխան ուղղության համար: Եվրոպայի խորհրդի Հայաստանի գրասենյակը[43] առանցքային դերակատարում ունի տեղում ծրագրերի իրականացման գործընթացը համակարգելու և աջակցելու գործում, որն իրականացվում է համագործակցության մասով ապակենտրոնացման քաղաքականության համաձայն: 2018 թ. սեպտեմբերի 17-ի դրությամբ գրասենյակի կադրային կազմն ունեցել է 20 աշխատակից:

Գործողությունների ծրագրում ընդգրկված ծրագրերի իրագործումն, ըստ անհրաժեշտության, ներառում է կարիքների գնահատում, օրենսդրության մասով փորձագիտություն, կարողությունների զարգացում,

[43] https://www.coe.int/web/yerevan

իրազեկում և հավասար կողմերի համատեղ ուսումնասիրություններ: Այս մեթոդաբանության կիրառման նպատակը ազգային շահակիցների «սեփականատիրոջ կարգավիճակի» վերահաստատումն ու արդյունքների կայունության ապահովումն է, ինչը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի ծրագրերի կառավարման մեթոդաբանությանը:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի մշակած համագործակցային մեթոդը բխում է «բազմաինստիտուցիոնալ» մոտեցումից, որը թույլ է տալիս Եվրոպայի խորհրդի տարբեր կառույցներին ու մարմիններին հասցեական աշխատել կառավարության գործընկերների, խորհրդարանի, անկախ կառավարչական հիմնարկների, օրինակ՝ Օմբուդսմենի, տեղական ու մարզային իշխանությունների և քաղաքացիական հասարակության հետ՝ համակողմանի, ներառական, հաջողված ու կայուն բարեփոխումների յուրօրինակ լծակ ձևավորելու նպատակով:

Գենդերային իրավահավասարությունը հաշվի է առնվում Եվրոպայի խորհրդի բոլոր ծրագրերում՝ Եվրոպայի խորհրդի համագործակցային գործունեության մեջ Գենդերային ներառման ձեռնարկին համապատասխան:[44] Գենդերային ներառման մոտեցումը սահմանվում է գործողությունների ծրագրին առնչվող գործողությունների մշակման ընթացքում և կիրառվում է բոլոր գործողությունների նկատմամբ՝ անկախ դրանց ուղղվածությունից: Օրինակ՝ գենդերային իրավահավասարության և կանանց իրավունքների չափանիշը հաշվի է առնվում երբ օրենսդրական ու ներպետական տարբեր փաստաթղթերը վերանայվում են եվրոպական չափանիշների լույսի ներքո: Գենդերային իրավահավասարության հարցը կներառվի նաև վերապատրաստման ծրագրերում: Գենդերային ազդեցությունը կվերլուծվի ծրագրերի նախագծման ու իրագործման ժամանակ: Ի լրումն գենդերային խնդիրների ներառման, կքննարկվեն գենդերային իրավահավասարությունը խթանող կոնկրետ գործողություններ: Գործողությունների ծրագիրը կնպաստի Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակներին (ՄԱԿ ԿԶՆ), մասնավորապես, 5-րդ՝ «հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին» և 16-րդ՝ «խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը» նպատակներին: Գենդերային հավասարության ընդլայնմանն ու գենդերահեն բռնության կանխարգելմանն ու դրա դեմ պայքարին ուղղված գործողությունները նպաստում են 5.1 թիրախի, այն է՝ «ամենուր վերջ դնել բոլոր կանանց և աղջիկների նկատմամբ գործադրվող խտրականության բոլոր ձևերին» և 5.2 թիրախի իրագործմանը, այն է՝ «վերացնել բոլոր կանանց և աղջիկների հանդեպ գործադրվող բռնության բոլոր ձևերը պետական և մասնավոր ոլորտներում, այդ թվում՝ թրաֆիքինգը և սեռական շահագործման այլ տեսակները»: Երեխաներին բռնությունից, սեռական շահագործումից ու սեռական բնույթի բռնություններից պաշտպանելու և այդ երևույթները կանխարգելելու ռազմավարություններ ներդնելու, ինչպես նաև երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնության հարցերով զբաղվող մասնագետների կարողությունները զարգացնելու մասով նախատեսված գործողությունները նպաստում են 16.2 թիրախի իրագործմանը, այն է՝ «վերջ դնել երեխաների չարաշահմանը, շահագործմանը, թրաֆիքինգին, նրանց դեմ գործադրվող բոլոր տեսակի բռնություններին և խոշտանգումներին»:

Սույն գործողությունների ծրագրի՝ կանանց համար արդարադատության հասանելիությանն աջակցող մասը համահունչ է 16.3 թիրախին, այն է՝ «խթանել օրենքի գերակայությունը ազգային և միջազգային մակարդակներում և ապահովել արդարադատության հավասար հասանելիություն բոլորի համար»: Քաղաքացիների մասնակցությունն ապահովող գործողությունները, որոնց կենտրոնում կանանց դերն է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացում, նպաստում են 5.5 թիրախին, այն է՝ «ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և հավասար հնարավորությունները քաղաքական, տնտեսական և հանրային կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում ղեկավար դիրք զբաղեցնելու համար»:

Եվրոպայի խորհուրդը խթանում է ծրագրային միջոցառումներում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը: Ներառականության նկատմամբ կիրառվում է Եվրոպայի խորհրդի

[44] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680656cf0

համագործակցային աշխատանքներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության ձեռնարկի մոտեցումը:[45]

Սույն գործողությունների ծրագրում հաշվի են առնված Հայաստանի համար 2015-2018 թթ. գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում քաղած դասերը, այդ թվում՝

- Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը համագործակցությանը, որտեղ Եվրոպայի խորհրդի չափանիշներն ու սկզբունքները կիրառվում են թե՛ որպես տեխնիկական աջակցության միջոց և թե՛ որպես նպատակ, կարող է էականորեն նպաստել այդ իրավունքների իրացմանը:
- Տեխնիկական համագործակցության բոլոր փուլերում քաղաքացիական հասարակության ներգրավումը նպաստում է բարեփոխումների իրականացման գործում նրա դերի ամրապնդմանը: Սա ընդլայնում է ներառականությունն ու ժողովրդավարական լեգիտիմությունը և այսպիսով՝ բարեփոխումների կայունությունը:
- Համագործակցության շրջափուլի բոլոր փուլերում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավումը, այդ թվում նրանց մասնակցությունն աշխատանքային խմբերի կազմում և հանրային լսումներին, նաև օգնել է ձևավորել զորեղ քաղաքացիական հասարակություն, որը, թերևս, նպաստել է հիմնականում խաղաղ ժողովրդավարական փոփոխությանը:
- Բարեփոխումներ կատարելու ազգային կարողությունները ձևավորելու նպատակով Կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի կարողությունների հզորացմանն ուղղված ջանքերը վճռորոշ են եղել արդյունքների կայունությունն ապահովելու առումով, իսկ Արդարադատության ակադեմիայի ներգրավվածությունը համագործակցային միջոցառումների իրականացմանը՝ նպաստել է, որ ազգային գործընկերներն ունենան կայացած «սեփականատիրոջ» կարգավիճակ:
- Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցելու Հայաստանի պատրաստակամությունը, ինչի մասին վկայում է ներկայացված կարծիքների զգալի թիվը, եղել է եվրոպական չափանիշներին համապատասխան հիմնարար իրավական շրջանակների ընդունման առանցքային գործոն:
- Ծրագրերի իրականացման բոլոր փուլերում ազգային գործընկերների հետ սերտ համագործակցությամբ ձևավորել է ընդհանուր շահադրդվածություն և դրանով է պայմանավորված այն, որ երկիրը Եվրոպայի խորհրդի համագործակցային գործընթացի ու արդյունքների լիարժեք «սեփականատերն» է:
- Գործողությունների ծրագրի մակարդակում կամավոր հանգանակությունների ընձեռած ճկությունը, նույնիսկ եթե սահմանափակվի, թույլ կտա, որ ֆինանսավորումը ժամանակին տեղաբաշխվի՝ ուղեկցելով իշխանություններին իրենց գերակայությունների իրագործման գործում, եթե PGG-ով այլևս հնարավոր չլինի ֆինանսավորել որոշ ոլորտներ՝ պայմանավորված իրավունքի գերակայության հարցերի վրա կենտրոնանալու ԵՄ-ի որոշմամբ:
- Ծրագրերի կառավարման նոր մեթոդաբանությունը (ԾԿՄ), որի կիրառումը պարտադիր է 2017 թվականից, նպաստել է ծրագրերի իրականացման որակի բարձրացմանը՝ պլանավորման և կառավարման, ծախսարդյունավետության և արդյունավետության առումներով, և բարելավվում է ռիսկերի գնահատումը և ուշադրությունը գենդերային հարցերին:
- Համակողմանի բարեփոխումներին տեխնիկական աջակցություն տրամադրելու համար երկարաժամկետ ֆինանսավորում և ազգային ու միջազգային գործընկերների համակարգման արդյունավետ մեխանիզմներ են անհրաժեշտ: Այս համատեքստում կարևոր գործոն է բոլոր շահակիցների հետ համակարգելու նախաձեռնողական մոտեցումը և ռեսուրսների մոբիլիզացումը Երևանի գրասենյակի կողմից:
- Եվրոպայի խորհուրդը կարող է կարևոր կամրջող դեր կատարել տարբեր պետական և ոչ պետական դերակատարների միջև:

[45] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680656cef

3.2 ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու Եվրոպայի խորհրդի գործողությունների արդիականությունն ապահովելու նպատակով համակարգում է իրականացվում տարբեր մակարդակներում և տարբեր հարթակներում, այդ թվում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում:

Եվրոպայի խորհրդի գործողությունները որոշվում և իրագործվում են ընտրելով այն ուղղությունները, որտեղ Կազմակերպությունն ունի լուրջ փորձագիտական կարողություններ և առավելություններ: ՀՀ իշխանությունների հետ համատեղ համագործակցային աշխատանքը ձևավորվել է տեղում աշխատող այլ միջազգային կազմակերպությունների և դերակատարների առաջադրած նպատակների ու նրանց աշխատանքի, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու համար իրականացված և/կամ ծրագրված գործողությունների հանգամանալից վերլուծության հիման վրա:

Այս գործողությունների արդիականությունն ապահովելու նպատակով Եվրոպայի խորհուրդն աշխատում է միջազգային գործընկերների, հիմնականում, Եվրոպական միության և, մասնավորապես, ԵՄ պատվիրակության հետ սերտ համակարգման ձևաչափով: Համակարգում է ապահովված նաև Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության/Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) հետ:

Ըստ նպատակահարմարության, ստեղծվում են համակարգման հարթակներ և ձեռնարկվում են համատեղ աշխատանքներ: Շվեյցարիայի կառավարության կողմից ֆինանսավորվող՝ «Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում» ծրագրի շրջանակներում ձևավորվել է տեղական կառավարման ոլորտում աշխատող դոնոր կազմակերպությունների համակարգող հարթակ, որը էական նշանակություն է ունեցել տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրային աշխատանքների կապակցվածությունն ու փոխլրացումներն ապահովելու և 2019 թ. հունվարից մեկնարկող նոր գործողությունների ծրագրի շրջանակում իրականացվելիք հետագա ծրագրերը նախապատրաստելու առումով: Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակը մասնակցում և համանախագահում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Ժողովրդավարական կառավարման մասով դոնորների համակարգման խմբի հետ:

Եվրոպայի խորհուրդը նաև սերտ կապ է պահպանում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների զարգացման գործակալությունների հետ, որոնց շարքում են Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը (SDC), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալությունը (SIDA), Ավստրիական զարգացման գործակալությունը (ADA), Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆՄԶԳ), Միացյալ Թագավորության, Նորվեգիայի, Դանիայի կառավարությունները և այլն:

3.3 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Գործողությունների ծրագրի ընդհանուր բյուջեն մոտավորապես 18.9 միլիոն եվրո է: 0.1 միլիոն եվրոյի չափով գումար (ընդհանուր բյուջեի 0.5%-ը) ապահովված է: Ընթացիկ բանակցություններին կապված նախահաշվային բյուջեի հիման վրա ակնկալվում է, որ կարճ ժամկետում մոտավորապես 4.8 միլիոն եվրո գումար կապահովեն ԵՄ-ն և դոնոր երկրները: Գործողությունների ծրագրով նախատեսված ծրագրերը ենթակա են ֆինանսավորման մի շարք աղբյուրներից, այդ թվում ԵՄ-ի հետ Համատեղ ծրագրերից, դոնոր երկրների և միջազգային կազմակերպությունների կամավոր հանգանակություններից, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի սովորական բյուջեից:

Գործողությունների ծրագրի իրականացումը համակարգելու համար ընդհանուր կառավարման ծախսը կկազմի ոչ ավել, քան գործողությունների ծրագրի ուղղակի ծախսերի 7%-ը:

2015 թվականից Հայաստանն օգտվում է Եվրոպական միության/Եվրոպայի խորհրդի Կառավարում հանուն լավ գործընկերության (PGG)[46] մասնակցությունից, որն այժմ ծածկում է հետևյալ ոլորտները՝ քրեական արդարադատություն, բանտերի առողջապահական համակարգի զարգացում, պայքար կոռուպցիայի և փողերի լվացման դեմ, կիբեռհանցավորություն, կանանց համար արդարադատության և քրեական արդարադատության հասանելիություն:

Եվրոպայի խորհրդի ռեսուրսների մոբիլիզացման ռազմավարությանը համապատասխան՝ ֆինանսական միջոցների հայթայթման աշխատանքները համակարգվում են Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակի (ODGP) հետ և ուղղված են սույն գործողությունների ծրագրին՝ որպես մեկ ամբողջություն:

2019-2022 թվականների սույն գործողությունների ծրագրի կառուցվածքը համապատասխանեցված է Եվրոպայի խորհրդի ծրագրերի և բյուջեի կառուցվածքին և դրա երկու երկամյա շրջափուլերին՝ Եվրոպայի խորհրդի սովորական բյուջեի և Հայաստանին ուղղված արտաբյուջետային տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող գործողությունների կապակցվածության, փոխլրացվածության ու համակարգվածության աստիճանը բարձրացնելու նպատակով:



Գծապատկեր 2. Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար 2019-2022 թթ. իրականացվող գործողությունների ծրագրի բյուջեի նախահաշիվն ըստ թեմատիկ ուղղությունների (եվրոյով)

3.4 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն (ՆԿ)՝ Ժողովրդավարության թեմայով իր զեկուցողների միջոցով (GR-DEM) իրականացնում է սույն գործողությունների ծրագրի կատարման ընդհանուր գնահատումը:

Եվրոպայի խորհուրդը պարբերաբար թարմացվող տեղեկատվություն է տրամադրում գործողությունների ծրագրի ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Այդ նպատակով Ծրագրերի գլխավոր տնօրինությունը (ODGP) ՆԿ-ին կներկայացնի հետևյալ միջանկյալ և ավարտական հաշվետվությունները.

- բանավոր հաշվետվություն՝ գործողությունների ծրագրի հաստատումից 12 ամիս անց, որով կներկայացվի առաջխաղացումը գործողությունների ծրագրի պաշտոնական մեկնարկից հետո,

[46] Նախկինում՝ Գործընկերային համագործակցության կառուցակարգ (PCF):

- առաջընթացի միջնաժամկետ գնահատման համակողմանի հաշվետվություն՝ գործողությունների ծրագրի հաստատումից 24 ամիս անց,
- առաջընթացի ավարտական գնահատման հաշվետվություն՝ գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:

Սույն գործողությունների ծրագրով գրանցված առաջընթացը գնահատվելու է Եվրոպայի խորհրդի և Հայաստանի իշխանությունների կողմից համատեղ: Այդ նպատակով ստեղծվել է գործողությունների ծրագրի համակարգող կոմիտե, որի կազմում ներկայացված են Արտաքին գործերի նախարարությունը, սույն գործողությունների իրագործմանը մասնակցող այլ ազգային շահակիցները, ինչպես նաև Եվրոպայի խորհուրդը:

Համակարգող խորհուրդը կգնահատի հաստատված ծրագրերի իրագործումը, կքննարկի ապագա համագործակցությանը վերաբերող առաջարկներն ու առկա մարտահրավերները, ինչպես նաև կառաջարկի գործողությունների ծրագրի արդյունավետության բարելավման միջոցառումներ: Նիստերը գումարվելու են գործողությունների ծրագրի հաստատումից հետո 24 ամիս անց՝ իրականացման միջանկյալ փուլը գնահատելու նպատակով, և մինչև ծրագրի ավարտը՝ ընդհանուր իրականացումը գնահատելու նպատակով: Համակարգող խորհրդի կազմի առումով՝ պետք է ապահովվի գենդերային առումով հնարավորինս հավասարակշռված ներկայացվածություն՝ կախված ոլորտային գիտելիքներից և փորձից:

Բացի այդ, ODGP-ն, հաշվետվության պահանջներին համապատասխան, գործողությունների ծրագրի տարեկան հաշվետվությունները կուղարկի գործողությունների ծրագրի մակարդակում աջակցող դոնորներին:

ՀԱՎԵԼՎԱԾ Ի. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Գենդերային հավասարությունը և որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցությունը՝ որպես փոխհատվող թեմաներ.

- **Գենդերային հավասարությունը** ներառված է Եվրոպայի խորհրդի ծրագրերում՝ Եվրոպայի խորհրդի համագործակցային գործունեության մեջ գենդերային հարցերի ներառման ձեռնարկին համապատասխան:
- **Քաղաքացիների մասնակցությունը** Կազմակերպության կողմից խրախուսվում է Եվրոպայի խորհրդի համագործակցային գործունեության մեջ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության ձեռնարկին համապատասխան:

Համընդհանուր նպատակը. Աջակցել Հայաստանում այն բարեփոխումներին, որոնց միջոցով օրենսդրությունը, հաստատություններն ու պրակտիկան համապատասխանեցվում են մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում եվրոպայի չափանիշներին և այս կերպ աջակցում են Հայաստանի՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Մարդու իրավունքներ **Թեմատիկ արդյունք.** Մարդու իրավունքների պաշտպանությունն ու հավասարությունը ընդլայնված է մարդու իրավունքների չափանիշների, այդ թվում՝ գենդերային հավասարության չափանիշների լավ կառուցված ու համակարգված ներդրման և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) համակարգի արդյունավետության բարելավման միջոցով:	
Արդյունքներ	**Ցուցիչներ**
1.1. Մարդու իրավունքների պաշտպանություն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) ավելի լավ է վկայակոչվում և կիրառվում իրավաբանական հանրույթի և քաղաքացիական հասարակության կողմից, ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչն իր կատարելագործված կարողություններն օգտագործում է իր լիազորություններն ու գործառույթները կատարելու համար, Իշխանությունները՝ եվրոպական չափանիշներին համապատասխան հաստատում և իրագործում են 2020-2022 թթ. մարդու իրավունքների գործողությունների նոր ազգային ծրագիրը, Դատական համակարգում ՄԻԵԿ-ը, ՄԻԵԴ-ի նախադեպը և ազգային դատական նախադեպն ավելի ներդաշնակ են կիրառվում, տեղական օրենսդրությունն ընդունվել և կիրարկվում է եվրոպական չափանիշներին համապատասխան, իրավաբանական հանրույթի ներկայացուցիչները, այդ թվում դատավորներ, դատախազներ և քննիչներ, ներդաշնակ կիրառում են եվրոպական չափանիշներին համապատասխանող նոր քրեական օրենսդրությունը, նախնական կալանքի ինստիտուտը կիրառվում է ճիշտ և	• Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ) կատարվող հղումների որակը • Ազգային օրենսդրության մեջ ՄԻԵԿ-ի չափանիշների ներառվածության աստիճանը և մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման մակարդակը • ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի կողմից ՄԻԵԿ-ի չափանիշների մասով գիտելիքներն և հմտությունները համապատասխան ազգային հաստատություններին փոխանցման աստիճանը • Իրավասությունների տարբեր օղակների միջև անհամապատասխանությունների թիվը • Քրեական օրենսդրության՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության և կիրառման աստիճանը • Քրեական արդարադատության համակարգի շահակիցների կողմից նոր քրեական օրենսդրության կիրառման աստիճանը

համաչափ՝ ՄԻԵԿ-ի չափանիշներին համապատասխան, զինված ուժերում կիրառվում են մարդու իրավունքների ավելի լավ պաշտպանություն և խթանում ապահովող իրավակարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակներ, ուսումնական հաստատություններն իրենց գործուն մասնակցությունն են բերում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործին, զինված ուժերում արժևորվում է կին զինծառայողի նկարագիրը, զինծառայողների համար արդարադատության հասանելիությունը բարելավվել է:	• ՄԻԵԿ-ի դրույթների խախտմամբ տեղ գտած նախնական կալանքի դեպքերի նվազում • Իրավակարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակների՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշներին համապատասխանության և դրանց կիրառման աստիճանը • Զինված ուժերում մարդու իրավունքների իմացության մակարդակը և իրավաբանական հանրույթի ու զինվորական անձնակազմի կողմից դրանց կիրառության աստիճանը • Կին զինծառայողների հավաքագրման և առաջխաղացման մակարդակը և նրանց ղեկավարության տակ գտնվող տղամարդ զինծառայողների թիվը:
1.2. Մարդու իրավունքների և արժանապատվության խթանում Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ՀՀ իրավական դաշտն ու քաղաքականության շրջանակը համապատասխանում են Եվրոպայի խորհրդի չափանիշներին, գենդերահեն բռնությունից և ընտանեկան բռնությունից տուժած կանանց, այդ թվում ամենաանապահովներին ավելի հասանելի են արդարադատությունն ու աջակցման ծառայությունները, քրեական և հարակից օրենսդրությունը համապատասխանեցված է բոլոր հիմքերով խտրականության կանխարգելման ու դրանից պաշտպանության եվրոպական չափանիշներին, գործում են եվրոպական չափանիշներին, մասնավորապես, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) չափանիշներին համախատասխան խտրականության կանխարգելման և դրա դեմ պայքարի իրականացման համապատասխան անկախ հաստատություններ, համապատասխան շահակիցներն իրենց կատարելագործված կարողությունները մոբիլիզացնում են ռասիստական, հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության խոսքի և բռնության կանխումը, այս երևույթի դեմ պայքարը և հրահրողների դատական կարգով հետապնդումը բարելավելու համար, խոցելի խմբերի իրավունքներն ավելի լավ են երաշխավորված, նախադպրոցական կրթությունը բոլոր փոքրամասնությունների երեխաների, այդ թվում եզդի աղջիկների համար երաշխավորված է, պարտադրված ամուսնությունը քրեականացված է, տեղական իշխանությունների կատարելագործված գիտելիքներն ու հմտությունները թույլ են տալիս փոքրամասնությունների լեզուներն ավելի	• Գենդերահեն բռնության և ընտանեկան բռնության մասին ազգային օրենսդրության առկայության և եվրոպայի չափանիշներին համապատասխան կիրառության աստիճանը • Բռնությունից տուժած կանանց համար արդարադատության հասանելիության աստիճանը և գենդերահեն բռնության դեպքերում դատական համակարգի արձագանքի որակը • Խտրականության բացառման մասին օրենսդրության և ինստիտուցիոնալ շրջանակների՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության աստիճանը և դրանց կիրառման ու արդյունավետության մակարդակը • Ռասիստական, հոմոֆոբ/տրանսֆոբ բռնության և ատելության խոսքի ու սեռական կողմնորոշման և սեռական ինքնության հիմքով խտրականության դեպքերի նվազում և դատական կարգով հետապնդման ու դատապարտման մակարդակի բարձրացում • Խոցելի խմբերի ինտեգրվածության աստիճանը • Փոքրամասնությունների երեխաների, հատկապես, եզդի աղջիկների՝ նախադպրոցական կրթության օղակում ընդգրկվածության մակարդակը, պարտադրված ամուսնությունների թիվը, տեղական ինքնակառավարման մարմիններում փոքրամասնությունների լեզուների օգտագործման աստիճանը • Երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի, այդ թվում՝ սեռական շահագործման և սեռական բնույթի

շատ օգտագործել տեղական ինքնակառավարման մարմիններում, Հայաստանն ավելի պատրաստված է Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Լանզարոտի կոնվենցիա) վավերացմանը, երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի, այդ թվում՝ մանկական թրաֆիքինգի կանխարգելումն ու դրանցից պաշտպանությունը բարելավված է, իշխանությունները, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի (ՄԻՊ գրասենյակ) մասնագետներն իրենց կարողությունները մոբիլիզացնում են երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխարգելելու և դրանցից երեխաներին պաշտպանելու համար և աջակցություն են տրամադրում տուժած և վկա հանդիսացող երեխաներին, համապատասխան իրավական տեքստերը և իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցված են Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիայի (Օվեդոյի կոնվենցիա) սկզբունքներին, կենսաբժշկության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական խնդիրների շուրջ հանրության հետագա իրազեկումն ու քննարկումը խրախուսված է, կենսաբժշկության բնագավառում մարդու իրավունքների ընդհանուր մակարդակը բարձրացված է, Հայաստանն ավելի պատրաստված է Օվեդոյի կոնվենցիայի ապագա վավերացմանը:	բռնությունների, թրաֆիքինգի կանխարգելման և դրանցից պաշտպանության իրավական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակների համապատասխանության աստիճանը • Համապատասխան դերակատարների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) կողմից կանխարգելման, պաշտպանության և տուժած ու վկա հանդիսացող երեխաներին աջակցության ռազմավարությունների իմացության ու կիրառման մակարդակը • Կենսաբժշկության բնագավառի ազգային օրենսդրության, քաղաքականության մեջ և պրակտիկայում եվրոպական չափանիշների ներառվածության աստիճանը • Կենսաբժշկության ոլորտում իրավաբանների և բժիշկների կողմից հիվանդների իրավունքների իմացության աստիճանը, հիվանդների իրավունքների պաշտպանվածության մակարդակը և բարոյական պարտավորությունների՝ եվրոպական չափանիշներին համապատասխան կատարման աստիճանը:
1.3. Սոցիալական իրավունքների ապահովում Օրենսդրությունն ու պրակտիկան համապատասխանեցված են եվրոպական չափանիշներին՝ այսպիսով բարելավելով վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով (վերանայված ԵՍԽ) երաշխավորված իրավունքների իրացումը, Հայաստանն ավելի պատրաստված է ընդունելու լրացուցիչ դրույթներ և կոլեկտիվ գանգատների ընթացակարգը, վերանայված ԵՍԽ-ին ներկայացվող ազգային զեկույցների որակը բարելավվել է, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (ՄԻՊ գրասենյակ) նպաստում է Հայաստանում մարդու սոցիալական իրավունքների համարժեք պաշտպանվածությանը:	• Սոցիալական իրավունքների մասով եվրոպական չափանիշներին համապատասխան օրենսդրության կամ փոփոխված օրենսդրության առկայության աստիճանը • Լրացուցիչ դրույթներ և կոլեկտիվ գանգատների ընթացակարգ ընդունելու ուղղությամբ գրանցված առաջընթացի մակարդակը • Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային (վերանայված ԵՍԽ) ներկայացվող ազգային զեկույցների որակը • Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ)՝ ի աջակցություն մարդու սոցիալական իրավունքների կատարած միջամտությունների մակարդակն ու արդյունավետությունը:

Իրավունքի գերակայություն **Թեմատիկ արդյունք.** Ժողովրդավարական անվտանգությունն ամրապնդված է՝ գործող օրենսդրության ու եվրոպական չափանիշների ընդլայնված կիրառության, ժողովրդավար հասարակության համար նպաստավոր իրավական ու ինստիտուցիոնալ դաշտի կայացման ու արդարադատության բարելավված որակի և կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության շնորհիվ:	
Արդյունքներ	**Ցուցիչներ**
2.1. Արդարադատության ապահովում Դատական համակարգի վերաբերյալ ազգային իրավական ակտերն ընդունված են և կիրառվում են Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան, ինքնակարգավորվող դատական մարմիններն իրենց աշխատանքը կատարում են ավելի թափանցիկ ու արդյունավետ՝ եվրոպական չափանիշներին և լավ աշխատակարգերին համապատասխան, դատարանները գործում են և արդյունավետ կառավարվում են Արդարադատության արդյունավետության հարցերով եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) մեթոդաբանությունների ու գործիքների կիրառմամբ, արդարադատության հավասար հասանելիությունը բարելավված է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների լավագույն աշխատակարգերին համապատասխան, Կոնվենցիայի 6-րդ հոդվածին առնչվող ՄԻԵԴ-ի վճիռներում ներառված ընդհանուր միջոցներն արդյունավետ կիրառվում են, համապատասխան շահակիցներն ավելի լայն մասշտաբով են կիրառում արբիտրաժի ու հաշտարարի ինստիտուտները՝ նպաստելով արդարադատության հասանելիության ընդլայնմանն ու գործերի կուտակումների կրճատմանը, իրավաբաններն իրենց գործառույթներն իրականացնում են անկախ և պրոֆեսիոնալ եղանակով, բուժօգնության տրամադրման կարգավորիչ և գործառնական շրջանակներն ընդունված են և կիրառվում են եվրոպական չափանիշներին համապատասխան, բանտարկյալները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող ու խոցելի խմբերի անձինք բանտերում ապահովված են ավելի լավ պայմաններով և բուժօգնությամբ, ուժեղացված է բուժանձնակազմի անկախությունը բանտային համակարգում, պրոբացիայի ծառայության կայացած համակարգը լիարժեք գործում է ազգային մակարդակում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան, պրոբացիայի ծառայության աշխատակիցները զարգացնում են իրենց կարողություններն՝ իրենց նոր պարտականությունները կատարելու համար, համապատասխան բարեփոխումների շնորհիվ ոստիկանությունը գործում է եվրոպական չափանիշներին համապատասխան:	• Դատական համակարգին վերաբերող օրենսդրության և/կամ փոփոխված օրենսդրության առկայության և եվրոպական չափանիշներին համապատասխան կիրառության աստիճանը • Ինքնակարգավորվող դատական մարմինների ընթացակարգերի, կանոնների և կարգավորումների և կառավարման կարողությունների որակը • Ինքնակարգավորվող դատական մարմինների կողմից դատարանների էլեկտրոնային միասնական համակարգի, սնանկության և միջնորդության էլեկտրոնային կայքերի ներդրման ու կիրառման աստիճանը • Դատարանների ընթացիկ աշխատանքում Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) գործիքների և մեթոդաբանության կիրառման աստիճանը • Հաշտարարի և արբիտրաժի ինստիտուտի կիրառման և գործերի կուտակման նվազման մակարդակը • Իրավաբանների կողմից տրամադրվող ծառայությունների որակը և հաճախորդների գոհունակության մակարդակը • Կարգավորման և ինքնակարգավորման շրջանակների առկայության և եվրոպական չափանիշներին համապատասխան կիրառության աստիճանը • Բանտարկյալներին տրամադրվող բուժօգնության որակը • Քրեակատարողական բժշկական կենտրոնի գործունության աստիճանը • Հայաստանում պրոբացիայի ծառայության գործունեության մակարդակն ու աշխարհագրական ծածկույթը • Հայաստանի պրոբացիայի ծառայության կողմից մատուցվող ծառայությունների որակը:

2.2. Իրավունքի գերակայության ամրապնդում Հայաստանի սահմանադրական արդարադատության համակարգը մոտարկված է եվրոպական չափանիշներին, տվյալների պաշտպանության մասին օրենսդրությունն առկա է և կիրառվում է եվրոպական նոր չափանիշներին համապատասխան, Տվյալների պաշտպանության մարմինը մոբիլիզացնում է իր կատարելագործված կարողություններն՝ այդ օրենսդրության կիրառումն ապահովելու համար, մասնագետները մոբիլիզացնում են իրենց կարողությունները՝ տվյալների պաշտպանության մասին օրենսդրությունը կիրառելու համար (մասնավորապես կապված էլեկտրոնային, առողջապահական տվյալների, երեխաների տվյալների և տեսահսկման հետ), ազգային օրենսդրությունը, լրատվական դաշտի կարգավորումն ու պրակտիկան համապատասխանում են խոսքի ազատության մասին եվրոպական չափանիշներին (ներառյալ համացանց, լրատվական բազմակարծություն և հանրային հեռարձակում), լրագրողներն իրենց գործառույթներն իրականացնում են ավելի պրոֆեսիոնալ, պատասխանատու և էթիկայի նորմերին համապատասխան, լրագրողներն իրենց գործառույթները կատարում են անվտանգ միջավայրում, ընտրությունների լուսաբանումը լրատվամիջոցներով համապատասխանում է ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին, համացանցի կառավարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարականների ավելի մեծ մասն է կատարվում:	• Եվրոպական չափանիշներին երկրի սահմանադրական արդարադատության համակարգի համապատասխանության աստիճանը • Սահմանադրական բողոքները քննելու Սահմանադրական դատարանի կարողությունների մակարդակը • Տվյալների պաշտպանության եվրոպական չափանիշներին համապատասխան ազգային օրենսդրության և/կամ փոփոխված օրենսդրության առկայության և կիրառման աստիճանը • Տվյալների պաշտպանության մարմնի աշխատանքի որակը՝ օրենսդրության կիրառումն ապահովելու ուղղությամբ • Ազատ արտահայտվելու, այդ թվում՝ համացանց, լրատվական դաշտի բազմակարծություն և հանրային հեռարձակում, եվրոպական չափանիշներին համապատասխան՝ լրատվական դաշտի կարգավորման ու պրակտիկայի մասով ազգային օրենսդրության և/կամ փոփոխված օրենսդրության առկայության աստիճանը • Եվրոպայի խորհրդի՝ Լրագրության պաշտպանության ու լրագրողների խթանման հարթակին ներկայացված ահազանգերի և լրագրողների դեմ հանցագործությունների դատապարտման դեպքերի մակարդակը • Իրականացվող վերապատրաստումների որակը և լրագրողների վարքականոնների կիրառումը եվրոպական չափանիշներին համապատասխան • Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական չափանիշներին համապատասխան՝ ընտրությունների լուսաբանման աստիճանը • Համացանցի կառավարման մասին Եվրոպայի խորհրդի հանձնարարականների կատարման մակարդակը:
2.3. Իրավունքի գերակայության սպառնալիքների դեմ պայքար Անկախ և արդյունավետ հակակոռուպցիոն մարմինների միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակներն առկա են, առկա են և կիրառվում են բոլոր աստիճանի պետական պաշտոնյաների գույքի և շահերի հայտարարագրման	• Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակների առկայության և եվրոպական չափանիշներին համապատասխան կիրառման աստիճանը

ընդլայնված համակարգեր, ներդրված են փողերի լվացման/ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ու բացահայտման արդյունավետ միջոցներ, ներդրված են փողերի լվացման/ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ու բացահայտման գործուն մեխանիզմներ, առկա են և կիրառվում են գույքի վերադարձի կայացած ինստիտուցիոնալ մեխանիզմներ, արձանագրված է կոռուպցիոն հանցագործությունների և իրավախախտումների քննության, դատական կարգով հետապնդման և դատապարտման արդյունավետության բարձրացում, կիբեռհանցավորության մասին ազգային օրենսդրությունը և նյութաիրավական ու դատավարական նորմերը համապատասխանում են Բուդապեշտի կոնվենցիային, հաստատված են կիբեռհանցավորության դեմ քրեական արդարադատության համակարգի արձագանքման և էլեկտրոնային ապացույցների մասին ազգային ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը, կիբեռհանցավորության ստորաբաժանումն ու քրեական արդարադատության համակարգի հաստատություններն իրենց կարողությունները մոբիլիզացնում են կիբեռհանցավորության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը և էլեկտրոնային ապացույցների հասանելիությունը բարելավելու ուղղությամբ՝ ներպետական քննությունների ընթացքում և միջազգային համագործակցության միջոցով, կիբեռհանցավորության դեպքերի քննության ընթացքում միջգերատեսչական համագործակությունն ու տվյալների փոխանակման գործընթացը բարելավված է, ինտերնետային ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ համագործակցելու մշակույթը բարելավված է՝ համագործակցության իրավական հենքի (որի կենտրոնում դատավարական լիազորություններն ու երաշխիքներն են) և համագործակցության փոփոխված/ընդլայնված համաձայնագրերի միջոցով:	• Գույքի և շահերի հայտարարագրման համակարգերի՝ եվրոպական չափանիշներին ու աշխատակարգերին համապատասխանության աստիճանը • Գույքի և շահերի հայտարարագրման մակարդակն ու որակը • Գույքի՝ եվրոպական չափանիշներին համապատասխան վերադարձի մակարդակը • Կոռուպցիոն դեպքերի քննության, քրեական հետապնդման և դատական կարգով վճռի կայացման արդյունավետության բարձրացման մակարդակը • Բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության մեխանիզմի ներդրվածության աստիճանը • Կիբեռհանցավորության դեմ պայքարի իրավական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակների առկայության և եվրոպական չափանիշներին համապատասխան կիրառության աստիճանը • Կիբեռհանցավորության դեմ պայքարին առնչվող քրեական հարցերում միջազգային համագործակցության ավելի բարձր մակարդակ • Կիբեռհանցավորությամբ զբաղվող մարմինների՝ միջգերատեսչական համագործակցության միջոցով կիբեռհանցավորությունը կանխելու և դրա դեմ պայքարելու կարողությունների ավելի բարձր մակարդակ • Ծառայություն մատուցող ազգային և բազմազգ կազմակերպությունների համագործակցության բարելավված մակարդակ:
Ժողովրդավարություն **Թեմատիկ արդյունք.** Հասարակության ժողովրդավարացումը խրախուսվում է ընտրական գործընթացների բարեվարքության, ամրապնդված տեղական ժողովրդավարության և ժողովրդավարական գործընթացներում երիտասարդների մասնակցության բարձր մակարդակի միջոցով:	
Արդյունքներ	**Ցուցիչներ**
3.1. Ժողովրդավարական կառավարման ամրապնդում և նորարարության խրախուսում Ընտրական օրենսդրությունն ու պրակտիկան համապատասխանում են եվրոպական չափանիշներին, բարձրացել է հանրության վստահությունն ընտրական գործընթացի նկատմամբ, տեղական ժողովրդավարության և ֆինանսական համահարթեցման օրենսդրական ու ինստիտուցիոնալ դաշտը	• Ընտրական օրենսդրության մեջ և պրակտիկայում եվրոպական չափանիշների ներառվածության աստիճանը • Ընտրական գործընթացի նկատմամբ վստահության մակարդակը • Տեղական ժողովրդավարության օրենսդրական ու ինստիտուցիոնալ դաշտի և ֆինանսական համահարթեցման

համապատասխանում է եվրոպական չափանիշներին, տեղական իշխանությունները զարգացնում և ամրապնդում են ծառայությունների ավելի լավ մատուցման ինստիտուցիոնալ կառուցվածքը, տեղական իշխանություններն օգտագործում են իրենց հզորացված կարողությունները՝ քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիների մասնակցության ռազմավարություններ ընդունելու և իրագործելու համար, պետական կառավարման մարմինները պատշաճ կերպով խորհրդակցում են տեղական իշխանությունների հետ՝ վերջիններիս ազգային ասոցիացիաների միջոցով, նրանց անմիջականորեն առնչվող հարցերի շուրջ, տեղական իշխանությունները թափանցիկ են, հաշվետու և գործում են էթիկայի ու բարեվարքության նորմերին համապատասխան և իրականացնում են բաց կառավարում ու ապահովում որոշումների կայացման գործընթացի նկատմամբ քաղաքացիների վերահսկողությունը:	վերանայված համակարգի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության աստիճանը • Տեղական կառույցներում գործիքների կիրառման աստիճանը ու կարողությունների մակարդակը • Տեղական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության մեխանիզմների առկայության և կիրառելիության աստիճանը • Տեղական իշխանությունների, նրանց ասոցիացիաների և ազգային իշխանությունների միջև խորհրդակցությունների մակարդակն ու որակը • Տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության քաղաքականությունների, ռազմավարությունների առկայությունը, իրականացման մակարդակն ու իրականացվող միջոցառումների որակը:
3.2. Մասնակցության և բազմազանության խթանում Բարձրագույն կրթության ոլորտում բարեվարքության ապահովման ու կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակը կատարելագործված է և արդյունավետ գործում է, բարձրագույն կրթության ոլորտի հիմնական շահակիցները ճանաչում են կոռուպցիոն ռիսկերը և առաջ են տանում բարեվարքությունը խթանող գործողություններ, երիտասարդներին, հատկապես, գյուղական շրջանների երիտասարդներին առնչվող ազգային և տեղական քաղաքականություններն ու աշխատակարգերը համապատասխանեցված են եվրոպական չափանիշներին և լավագույն աշխատակարգերին, այդ թվում՝ գենդերային իրավահավասարության մասով, երիտասարդները մարդու իրավունքների և ժողովրդավարական քաղաքացիության թեմայով կրթություն ու փորձ են ձեռք բերում երիտասարդական կազմակերպություններում և երիտասարդական գործունեության շրջանակներում:	• Երիտասարդությանն ուղղված ազգային քաղաքականության մեջ և պրակտիկայում եվրոպական չափանիշների, մասնավորապես Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (ԵԿ) երիտասարդական քաղաքականությանն ու երիտասարդների աշխատանքին առնչվող հանձնարարականների ներառվածության աստիճանը • Մարդու իրավունքների կրթության և ժողովրդավարական քաղաքացիության՝ Եվրոպայի խորհրդի ռեսուրսների և չափանիշների առկայությունը և օգտագործումը երիտասարդական կազմակերպությունների կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկի նկարագրություն	Ռիսկի կառավարում
Քաղաքական ռիսկեր	
Լավագույն սցենար՝ հաշտ կառավարություն և խորհրդարանական մեծամասնություն, քաղաքացիական հասարակության կառուցողական աշխատանք կառավարության հետ. • բարեփոխումների շուրջ կոնսենսուս է ձևավորված քաղաքական լայն շրջանակներում • բարեփոխումներն արդյունավետ իրականացվում են և ստանում են քաղաքացիների լայն շրջանակների աջակցությունը • կանանց և խոցելի խմբերի զորացում	Կարողությունների զարգացման ինտենսիվ աշխատանքներ, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի չափանիշներն առաջ տանող գործընկերների շրջանում: Ավելի մեծ աջակցություն հայաստանյան հաստատություններին և մյուս գործընկերներին: Բարեփոխումների գործընթացում Եվրոպայի խորհրդի ներգրավվածության մասին իրազեկության ավելի բարձր մակարդակ:
Վատագույն սցենար՝ Քաղաքական անկայուն վիճակ՝ պայմանավորված իշխող կուսակցության և խորհրդարանական ընդդիմության տարամետությամբ, հասարակության ճնշող պահանջներ և մեծ ակնկալիքներ. • բարեփոխումների մասնակի իրականացում և խորհրդարանական խմբերի դիմադրություն դրանց իրականացմանը • ընթացիկ բարեփոխումների ոչ բավարար ընկալում • բարեփոխումներն արագ մատուցելու ճնշում հասարակության կողմից:	Աջակցություն պատկան մարմիններին՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին օրենսդրական և կարգավորման շրջանակների համապատասխանությունն ապահովելու նպատակով: Հաստատությունների՝ այդ չափանիշները կիրառելու կարողությունների զարգացում, այդ չափանիշների մասին հանրության իրազեկության մակարդակի բարձրացում: Բնակչության և խորհրդարանական խմբերի շրջանում Կազմակերպության չափանիշներն առաջ տանող գործընկեր հաստատությունների իրազեկության մակարդակի բարձրացում: Իշխանության տարբեր ճյուղերում և քաղաքացիական հասարակությունում բարեփոխումների աջակիցների միջև կապերի և համագործակցության դյուրացում: Աջակցություն բարեփոխումների տեմպի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացմանն ուղղված կառավարության ջանքերին:
Վատագույն սցենար՝ Քաղաքական համակարգերի նկատմամբ վստահությունը վերանում է ձախողված ընտրական գործընթացի հետևանքով, քաղաքական անկայուն վիճակ, որը բխում է ընտրությունների արդյունքում իշխանության հետագա մասնատումից.	Թիրախային խմբերի իրազեկության բարձրացում, որպեսզի նրանք ընկալեն Կազմակերպության չափանիշների կիրառման կարևորությունը: Իշխանությունների, խորհրդարանական խմբերի և քաղաքացիական հասարակության՝ չափանիշների կիրառման վերաբերյալ երկխոսության խթանում: Ուշադրության կենտրոնացում խտրականության բացառման վրա:

• քաղաքական մեծ բևեռացում • բարեփոխումների գործընթացի դանդաղում կամ կանգ • սոցիալական վիճակի վատթարացում հատկապես կանանց և խոցելի խմբերի շրջանում:	Միջազգային գործընկերների (մասնավորապես ԵՄ-ի) հետ մեղմման ռազմավարությունների քննարկում:

Ծրագրերի իրագործմանը վերաբերող ռիսկեր	
Գործողությունների ծրագրի իրագործման համար բավարար ֆինանսավորման բացակայություն:	Ռեսուրսների ներգրավման համակարգված ջանքերի ավելացում երկրի ներսում և գլխամասից: Ֆինանսական միջոցների հատկացում մյուս ծրագրերի հետ փոխազդման ներուժ ունեցող ծրագրերին, առկա միջոցների արդյունավետ պլանավորում: Գործընկերների և դոնորների հետ հետադարձ կապի ապահովում ծրագրերի պլանավորումն, իրագործումն, արդյունքահեն մոնիթորինգն ու հաշվետվությունները գործնականում բարելավելու նպատակով, որպեսզի հնարավոր լինի դոնորներին ներգրավել և պահել:
Կրկնությունները բացառող և ծրագրերի փոխազդեցություն ապահովող արդյունավետ մեխանիզմների բացակայություն ազգային և միջազգային գործընկերների շրջանում:	Ավելացնել այն միջազգային գործընկերների հետ տարվող համատեղ միջոցառումների թիվը, որոնց հետ կա համակարգման պլան, ինչպես նաև հիմնական ուղերձն ավելի հզոր դարձնելու, տնտեսական արդյունավետության հասնելու և բարեփոխումների ընկալման մակարդակը բարձրացնելու նպատակով:
Խնդիրներ գործընկեր հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) նախանշման գործընթացում, ինչը հետևանքով ձգձգվում է գործողությունների իրագործումը:	Այս ռիսկը լուծելու համար համապատասխան ազգային շահակիցների հետ կարելի է լրացուցիչ խորհրդակցություններ կազմակերպել: Գործընկեր ՀԿ-ների ընտրության թափանցիկ գործընթացը, իշխանությունների ներգրավվածությունը բոլոր փուլերում կարող է օգնել վստահության ձևավորմանը և ապահովել արդյունավետ իրագործում:
Գնումների ազգային գործընթացը երկարատև և խրթին է՝ հանդիսանալով ծրագրերի իրագործման ընթացքի ձգձգումների պատճառ:	Կձեռնարկվի ազգային կարողությունների նախնական գնահատում՝ հավաստիանալու համար, որ գնումների ընթացակարգերը հնարավոր է իրականացնել համաձայնեցված ժամկետում: Երաշխիքներ պետք է նախատեսվեն այն դեպքերի համար, եթե գնումների ազգային ընթացակարգով հնարավոր չէ ապահովել ժամկետները: Ուսումնասիրել Եվրոպայի խորհրդի կողմից գնումները կատարելու հնարավորությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

(գումարները՝ եվրոյով)

Ոլորտներ	ԳՊ բյուջե	Սովորական բյուջեի ֆինանսավորում	ԵՄ ֆինանսավորում	ՎԿ ֆինանսավորում	Ապահովված ընդհանուր միջոցներ	Չֆինանսավորված մաս
Մարդու իրավունքներ	**6 703 667**	**10 000**	**0**	**90 000**	**100 000**	**6 603 667**
1. Մարդու իրավունքների պաշտպանություն	3 550 000	10 000	0	90 000	100 000	3 450 000
2. Մարդու իրավունքների և արժանապատվության խթանում	2 212 000	0	0	0	0	2 212 000
3. Սոցիալական իրավունքների ապահովում	700 000	0	0	0	0	700 000
Տարածաշրջանային ԳԼԿ (PGG)	241 667	0	0	0	0	241 667
Իրավունքի գերակայություն	**6 949 000**	**0**	**0**	**0**	**0**	**6 949 000**
1. Արդարադատության ապահովում	4 024 000	0	0	0	0	4 024 000
2. Իրավունքի գերակայության ամրապնդում	1 150 000	0	0	0	0	1 150 000
3. Պայքար իրավունքի գերակայության սպառնալիքների դեմ	850 000	0	0	0	0	850 000
Տարածաշրջանային PGG	925 000	0	0	0	0	925 000
Ժողովրդավարություն	**4 450 000**	**0**	**0**	**0**	**0**	**4 450 000**

1. Ժողովրդավարական կառավարման ամրապնդում և նորարարության խրախուսում	3 400 000	0	0	0	0	3 400 000
2. Մասնակցության և բազմազանության խթանում	1 050 000	0	0	0	0	1 050 000
Տարածաշրջանային ԳԼԿ (PGG)	0	0	0	0	0	0
Ընդհանուր կառավարման ծախսեր	797 333			0	0	797 333
ԸՆԴԱՄԵՆԸ	**18 900 000**	**10 000**	**0**	**90 000**	**100 000**	**18 800 000**

ՀԱՎԵԼՎԱԾ IV. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ/ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները Հայաստանի մասով.

2. Տեխնիկական համագործակցություն Հայաստանի հետ

- Հայաստանի համար 2012-2014 թթ. իրականացվող գործողությունների ծրագիր
- 2012-2014 թթ. գործողությունների ծրագրի առաջընթացի գնահատում
- 2012-2014 թթ. գործողությունների ծրագրի ավարտական հաշվետվություն
- Հայաստանի համար 2015-2018 թթ. իրականացվող գործողությունների ծրագիր
- Հայաստանի համար 2015-2018 թթ. իրականացվող գործողությունների ծրագրի ընթացիկ գնահատում:

3. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար

- Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի՝ Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության վիճակի մասին 2014, 2015, 2016, 2017 և 2018 թվականների զեկույցները:

4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե (ՆԿ)

- ՆԿ-ի թիվ CMN(2018)5 հանձնարարականը Հայաստանում Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի կիրառման վերաբերյալ.
- ՆԿ-ի թիվ ChL(2017)2 հանձնարարականը Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ.
- ՆԿ-ի թիվ (2010)4 հանձնարարականը Զինծառայողների մարդու իրավունքների վերաբերյալ.
- ՆԿ-ի թիվ (2018)4 հանձնարարականը ժողովրդավարական մասնակցության, ինստիտուցիոնալ կարողությունների և տեղական ֆինանսների առնչությամբ.
- ՆԿ-ի թիվ (2000)21 հանձնարարականը իրավաբանի մասնագիտությամբ զբաղվելու ազատության վերաբերյալ:

5. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ)

- ԵԽԽՎ-ի բանաձևը Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների գործունեության վերաբերյալ.
- ԵԽԽՎ-ի զեկույցը 2017 թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության վերաբերյալ.
- ԵԽԽՎ-ի թիվ 2077 (2015) բանաձևը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային միացած պետություններում նախնական կալանքի չարաշահման վերաբերյալ:

6. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար (Հանձնակատար)

- Երկրի մշտադիտարկման զեկույց (2011թ.), Երկրի մշտադիտարկման զեկույց (2015թ.).

7. Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես (Կոնգրես)

- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա և տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին լրացուցիչ արձանագրություն.
- Հայաստանում տեղական ժողովրդավարության մասին թիվ 351(2014) հանձնարարական:

8. Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի և փոքրաքանակ խորհրդատվական մարմիններ

- Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) զեկույցը Հայաստանի մասին (մոնիթորինգի չորրորդ շրջափուլ), հաստատված 2016 թ. հունիսին.

- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի չորրորդ կարծիքը Հայաստանի վերաբերյալ, հաստատված 2016 թ. մայիսի 26-ին:
- Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ECRML) (չորրորդ զեկույցը) Հայաստանի կողմից
- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ESCR) եզրակացությունները Հայաստանի առնչությամբ
- Խոշտանգումների կանխարգելման եվրոպական հանձնաժողովի (CPT) հաշվետվությունը 2016 թ. հոկտեմբերին Հայաստան կատարած այցի վերաբերյալ
- Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների (GRECO) համատեղ գնահատման առաջին և երկրորդ փուլերի արդյունքներով տրված հանձնարարական.
- GRECO-ի գնահատման չորրորդ փուլի հանձնարարականները պատգամավորների, դատավորների և դատախազների առնչությամբ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ և Հայաստանի համապատասխանության հաշվետվությունը.
- Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) Դատական օրենսգրքի նախագծի մասին՝ ընդունված օր 112-րդ նստաշրջանում.
- Վենետիկի հանձնաժողովը Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ.
- Վենետիկի հանձնաժողովի համատեղ կարծիքը Ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ և երկրորդ համատեղ կարծիքն Ընտրական օրենսգրքի վերաբերյալ, համատեղ կարծիքը Քաղաքական կուսակցությունների մասին սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ, համատեղ կարծիքը Հանրաքվեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ:

9. Ձեռնարկներ

- Եվրոպայի խորհրդի համագործակցային ծրագրերում գենդերային ներառման ձեռնարկ.
- Եվրոպայի խորհրդի համագործակցային ծրագրերում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության ձեռնարկ.
- Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության ձեռնարկ:

10. Ազգային քաղաքականության փաստաթղթեր

- Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր
- Հայաստանի և Եվրոպական միության միջև 2017 թ. նոյեմբերի 24-ին ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
- Տարածքային զարգացման 2014-2025 թթ. ռազմավարություն
- Դատաիրավական բարեփոխումների 2018-2023 թթ. ռազմավարություն, որը դեռևս չի ընդունվել ՀՀ կառավարության կողմից
- Ապակենտրոնացման ճանապարհային քարտեզի նախագիծ